

Քրոնիկ Խ. Թ

18 Մայ. 1928

Թուքա

7 06 MAY 2013 99

ԿԱՐՃԱՐՈՑ
ԱՂՋԹԱԳԻՐՔ

ԱՄԵՆ ՕՐՈՒԱԾ

Ի Հ ՄԿՐՏԻՉ Վ ԱԻԳԵՐԵԱՆԵ



ՎԵՆԵՍԻԿ

Ի ՍՈՒԲԵ ՊԱԶԱՐ

1911

ՆԱՆՈՒՅՈՒՄՆ

Շատ կերպ սիրուն ու
օգտակար աղօթքի գրքեր
ելած են գրաբար եւ աշ-
խարհաբար, որ ամենուն
ձեռքը կան. այսու ամե-
նայնիւ ջերմեռանդները
աղաչեցին, որ աւելի հա-
մառու ու պարզ գրքոյկ
մը ըլլայ ամէն օրուան
համար, որ կարենայ մէկը
վրան միշտ պահել, և ուր
որ ըլլայ՝ բոլոր օրուան
հարկաւոր աղօթքները ը-
նել: Ասոնց փափաքը լե-
ցընելու համար այս պըզ-



1-1569 9/1

տի զործը զրեցինք ու տը-
պեցինք։ Տէր ինքն ըն-
դունի մեր աշխատանքն
ալ, բարեպաշտներուն ա-
ղօթքն ալ, որով մենք ալ
կրկին մասնակից կ'ըլ-
լանք հոգեւոր բարեաց։

Ա.Ո.Ա.ԽՕՏԵԱՆ

Ա.Դ.Օ Թ.Ք

Յանուն Հօր և Որդոյ և
Հոգոյն սրբոյ ամեն,

Փառք քեզ երկնաւոր
թագաւոր, երկնի և երկրի
սուելծող ու պահպանող,
ամենասուրբ Երրորդու-
թիւն, մի Աստուած և Տէր
ամենակալ, ամենակարող։
Փառք քեզ տէր, լոյս իմ

և կեանք իմ, որ ոչնչէ զիս
ըրիր բանական կենդանի,
որպէս զի զքեզ ճանչնամ
ու պաշտեմ. և քրիստո-
նէական սուրբ և ուղղա-
փառ հաւատքի արժանի ը-
րիր, որ կաթուղիկէ եկե-
ղեցւոյ օրէնքով ու բարի
գործով քեզ փառաւորելով
յաւիտենական կենաց ժա-
ռանգ ըլլամ: Այսչափ ա-
տեն ալ տուիր ինձի, որ
ըրած մեղքերս ապաշխա-
րեմ, բարեգործութիւն ու
առաքինութիւն աւելցը-
նեմ քու չնորհքովդ, միշտ
պատրաստ ըլլալով բարի
մահուան եւ երկնից ար-
քայութեան:

Շնորհակալ եմ որ այս
գիշերս ալ զիս կենդանի
պահեցիր, և ողջ առողջ
այս առաւօտս հասուցիր,
որ ելնեմ ի փառս քո աշ-
խատիմ: Ուստի կ'աղաքեմ
որ փուճը չերթայ ինծի ը-
րած բարերարութիւնդ ա-
մէն կողմանէ. հապա հաս-
նի իր վերջի վախճանին, որ
ես գու մի միայն աղբիւր
ամենայն բարեաց, մեր
սրտին լեցընողն և հանգ-
չեցնողը յաւիտեան:

Տուր ուրեմն քու սուրբ
շնորհքդ, որ այս օրս բոլոր
առանց մեղաց անցընեմ.
ամէն բանս ու գործս ի
փառս քո ընեմ, եւ քու

սուրբ կամքդ կառարեմ
զգաստութեամբ և արդա-
րութեամբ և աստուած-
պաշտութեամբ , շիտակ
սրտով , մաքուր մտքով ,
ճշմարիտ խօսքով և ար-
դար գործով : Քո եմ ես և
կեցո զիս , անպիտան ծա-
ռայդ եմ և անարժան որ-
դիդ : Գեղ բոլորովին կը
յանձնեմ զիս ալ՝ ամէն
բանս ալ՝ որ քուկդ են
բովանդակ , հոգիս , մար-
մինս , միտքս , կամքս ,
զգայարանքս . դուն զիս
կառավարէ այս օրս ալ և
բոլոր կենացս մէջն ալ .
որպէս զի քեզմով զքեզ
զամ գտնամ , և յաւիտեան

փառաւորեմ սուրբ հրէշ-
տակներուն եւ ամէն սուր-
բերուն հետ . ամէն : Փառք
Հօր և Որդւոյ և Հոգւոյն
սրբոյ . այժմ և միշտ և
յաւիտեանս յաւիտենից .
ամէն :

Ներգործութիւն Հաւատոյ :

Խոստովանիմ և հաւա-
տամ , զի դու ես Աստուած
իմ և տէր . Հայր և Որդի և
Հոգի սուրբ . մի Աստուած ,
և երեք անձն . և մին ի
սուրբ Երրորդութենէն ,
միածին որդի Աստուծոյ
մեզի համար եկար մարդ
եղար ի սուրբ Աստուածա-

ծին կուսէն Մարիամայ. և
խաչիւ և մահուամբ և յա-
րութեամբ քով զմեզ երկ-
նաւոր հօրդ հետ հաշտե-
ցուցիլ, ու բաշխեցիր մե-
զի Հոգւոյդ սրբոյ շնորհքը,
որ կարենանք ճշմարիտ
հաւատով և բարի գոր-
ծով փրկութեան հասնիլ,
հիմա հոգւով՝ յարութեան
օրն ալ մարմնով։ Կը հա-
ւատամ միամիտ սրտով
ինչ որ ալ յայտներ ես,
Աստուած իմ, առաքելոց,
մարգարէից և վարդապե-
տաց բերնովը եւ գրքովը
սուրբ կաթողիկէ եկե-
ղեցւոյ. որուն հաւատա-
րիմ և հնազանդ որդի զիս

կը դաւանիմ։ Դուն զիս
սկահէ այս սուրբ հաւատ-
քիս մէջ մինչև ի մահ։

Յուշոյ։

Յոյս իմ ես դու, տէր
Աստուած իմ. և անտա-
րակոյս գիտեմ, որ ինչ որ
մեզի խոստացար՝ կու տաս,
ասդին շնորհք և անդին
փառք անվախճան, թէ որ
մենք ալ քու խօսքդ պա-
հենք, ու հաւատարիմ ծա-
ռայութիւն և որդիութիւն
քեզի ընենք։ Յոյսս չեմ
զրեր իմ վրաս, և ոչ ու-
րիշի վրայ. այլ բոլորովին
կ'ապաւինիմ քու անբաւ

գթութեանդ և մարդասիւ-
րութեանդ։ Միայն խընդ-
րեմ, քու ձեռքդ իմ վրաս-
ըլլայ, ու առաջնորդէ իմ
տկարութեանս, որ ինչ որ
կը յուսամ քեզմէ՝ քեզ-
մով և ի քեզ բարի գոր-
ծով կարենամ ժառանգել
յաւիտեան։

Սիրոյ:

Սէր իմ, տէր իմ, Աս-
տուած իմ, մի միայն բա-
րի և բարերար. զքեզ կը
սիրեմ ամէն բանէն ի վեր,
իմ կեանքէս ու հոգիէս ա-
ւելի. ոչ երկիր և ոչ երկինք
կրնան զիս քու սիրոյդ

բաժնել. ոչ հանգիստ, ոչ
նեղութիւն, ոչ մեծութիւն,
ոչ աղքատ ութիւն, ոչ
կեանք և ոչ մահ կրնան
մէկ հատիկ սիրական ս
ինծմէ զատել։ Զքեզ կը սի-
րեմ ծայրագոյն սիրով,
վասն զի ըստ ինքեան բա-
րի ես և ամենաբարի և ա-
մենայն բարի, միանգա-
մայն և բարերար, ուստի
չեմ կրնար մոռնալ ինծի
ըրածանբաւ բարիքդ։ Քու
սիրոյդ համար եղբայրս
ալ կը սիրեմ սրտանց ին-
ծի չափ, և իրեն բարիքը
ինծի պէս կ'ուզեմ. ինծի
չարիք ընողին ալ բարիք
ընես տէր՝ կը խնդրեմ։

Միայն դու տուր ինծի հա-
ւատարիմ մնալ միշտ ի
սէր քո, եւ գալ հասնիլ ի
վայելումն սիրոյ քո յաւի-
տեանս յաւիտենից. ամէն:

Առջի Աստուածածնայ:

Մարիամ կոյս՝ սրբուհի
անարատ՝ մայր Աստուծոյ
և մայր մեր, երկնի երկրի
թագուհի. դուն ես միայն
յետ Աստուծոյ մէկ հատիկ
մեր յոյս և ապաւէնը, մե-
ծութեանդ համեմատ զը-
թասիրտ, զթութեանդ հետ
առատ, առատութեամբդ
ամենուն սիրող, սիրե-
լի: Աղքատ եմ ես հոգ-



ւով քան մարմնով, քուա-
ռատ ողորմութեանդ կա-
րօտ. քու ձեռքդ է ամէն
շնորհքին զանձը. դու ա-
ւելի քան զիս զիտես իմ
ողորմելիութիւնս, անոր
համեմատ ինծի ողորմէ.
ոտքդ կ'իյնամ, կ'աղաչեմ
կը պաղատիմ, դուն ինչ-
պէս որ զիտես՝ հոգիս
հոգա. և որչափ որ կը
սխալիմ, դու զիս ճամ-
բայ բեր, որ ապա հով
հասնիմ իմ վախճանիս,
զոր Աստուած կ'ուզէ, ի-
րեն ծառայելով զինքը
զտնալ ու վայելել յաւի-
տեան:

Պահապան հրեշտակին:

Եշտան փառաւոր՝ հրեշտակ Աստուծոյ ամենակալի, որ անոր հրամանովը՝ ծնած օրէս ինչուան այս օրս զիս կը պահես, կը պահպանես ամէն չարէ, և անդադար ի բարին կը յորդորէս: Շնորհակալ եմ երախտեացդ. կ'աղաքու երախտեացդ. կ'աղաքու շնայիս իմ ապէրախտութեանս ու տմարդութեանս, հապա զթաս ողորմիս. ինչպէս որ մեծը պզորիկին պակսութեան կը ներէ, աչք կը խփէ: Զեռքէս բոներ զիս արքայուր-

թեան ճամբան կ'ուզես տանիլ, ես թէ որ խոտուրիմ՝ մի թողուր զիս իմ խելքիս, դարձուր շիտակ ճամբան՝ խրատելով ու յանդիմանելով: Բարեխօս եղիր Աստուծոյ առջեքու անարժան սանիդ համար, որ ճերմակերես ելլամ իր առջե, և քեզ ալ փառք ու պատիւ ըլւայ իմ փրկութիւնս յաւիտեան:





ՊԱՏԱՐԱԳԻ

ԱՊՈՅԹՅԱ

Փառք պատիւ և երկըրապազութիւն ի բարձունս
Հօր եւ Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւլուեանս յաւիտենից. ամէն :

Գոհանամ զքէն տէր, որ
զիս անարժանս արժանի
ըրիր քու առջեղ գալու,
քու մեծութեանդ հետ խօ-

սելու, իմ յարգութիւնս
ընել, և մասնակից ըլլալ
արդեանց Փրկչիս՝ սուրբ
պատարազը տեսնելով ու
լսելով։ Այս խորհուրդիս
մէջ երկնաւոր Հօրդ գութը
և ողորմութիւնը պայծառ
կ'երկնայ, որ մեր փրկու-
թեանը համար և մեր սի-
րոյն՝ քու Աստուածորդիդ
մատնեցիր ի չարչարանս
և ի մահ։

Որդւոյդ միածնի սէրը
կը յայտնուի, որ յօժարու-
թեամբ յանձն առիր՝ չէ
թէ միայն մեռնիլ խաչի
վրայ, հասկա սուրբ մար-
մինդ՝ սուրբ արիւնդ ալ
մեզի համար զոհ ընելով՝

զքեզ մեզի բաշխել ուզե-
ցիր ամէն օր՝ հաց կենաց
և բաժակ անմահութեան։

Հոգւոյդ սրբոյ քաղցրու-
թիւնը ու մարդասիրու-
թիւնը կը տեսնուի, որ բո-
վանդակ եկեղեցւոյ և իւ-
րաքանչիւր հաւատացելոց՝
շնորհքիդ աղբիւրը կը
բանաս Քրիստոսի ար-
դիւնքովը, ու հոգեւոր
հարստութեամբ զմեզ կը
փարթամացնես։ Երկրէ
երկինք մեր սիրուը կը վե-
րացնես, և ժամանակաւոր
կեանքով յաւիտենական
կենաց կը հասցընես։ Գո-
հութիւն և փառք քեզ ա-
մենասուրբ Երբորդու-

թիւն ի հրեշտակաց և ի
մարդկանէ. փառք քեզ:
Այս սուրբ պատարագս
կը տեսնեմ ի փառս սուրբ
Երրորդութեանդ, իմ մեղ-
քերուս թողութիւն գըտ-
նալու նոր նոր չնորհք
առնելու և չնորհակալ
ըլլալու քեզ, տէր, ամէն
բարերարութեանցդ: Աս է
սուրբ եկեղեցւոյ դիտաւո-
րութիւնը. ընդունէ, Աս-
տուած իմ, և իմ մասնա-
ւոր դիտաւորութիւններս
ալ կենդանեաց և մեռելոց
համար:

Ընթերցուածին՝ Աչետարա-
նին ոչ դիր. Հաշատամբն աշ
միաբան լուկ. ոչ առելցուր այս
աղօքբս:

Ո՞վ անուշ ու համեղ ճա-
շակ սուրբ արքայութեան,
զոր դու, Աստուած իմ,
մեղի կու տաս սուրբ պա-
տարագի սեղանին վրայ.
ուր դեռ պատրաստութիւն
կ'ըլլայ երկնային ամենա-
ճաշակ մանանային իջնա-
լու, հացին ի պատուա-
կան մարմին, և զինոյն
ի սուրբ արիւն Քրիտոսի
փոխուելու: Ասոր համար
կարգաւորեցիր՝ որ սուրբ

Եկեղեցիդ մեր սիրու միտաքը բանայ պատարագին առջի խօսքերովը, մարգարէական և առաքելական կարդացմունքովը, սուրբ աւետարանին խօսքերովը, և հանգանակին հաւատոյ դաւանութեամբ. որպէս զի հասկընանք, թէ ինչպէս մեծքան է այս սուրբ խորհուրդը՝ որ հիմա պիտի կատարուի ի յիշատակ խորհըրդոյ վերնատան և խաչի և ի փրկութիւն մեր։ Ուստի կ'աղաչեմ, տէր իմ, որ մաքրես ու պատրաստես իմ միտքս ալ, սիրոս ալ, որ չըլլայ թէ անարժանու-

թեամբ ներկայ ըլլամ ահաւոր և մեղսաքաւիչ պատարագիս, հապա քու շընորհքովդ արժանի ըլլամ մասնակից ըլլալու ամէնքարեաց սուրբ խորհըրդոյս։

Զ. Պ.:

Ասոր համար նախ և առաջ կը զզջամ բոլոր սըրտանց իմ ամէն մեղքերուս վրայ, որ հաշտ ըլլամ իմ ստեղծողիս հետ, կը ցաւիմ ստուգապէս որ շատ անգամ քու անուշ կամքիդ գպեր եմ, զքեզ բարկացուցեր եմ, Յիսուսիս

արիւնը ոտքի տակ առեր
եմ, ամէն կերպով ապե-
րախտ եմ գոնուեր աս-
տուածային երախտեաց :
Մեղայ, տէր մեղայ և զա-
նօրէնութիւնս իմ ես ին-
ձէն գիտեմ. ամենակալ
տէր, թող զմեղս իմ, ինչ-
պէս Մանասէին . Աս-
տուած քաւեա զիս զմե-
ղաւրս, ինչպէս մաքսա-
ւորը: Հայր, մեղայ յեր-
կինս եւ առաջի քո, գոչիմ
անառակ որդիին հետ. յի-
շեա զիս տէր, յորժամզայ-
ցես արքայութեամբ քով,
կ'աղաչեմ աջակողմեանա-
ւազակին պէս: Որ ստեղ-
ծերդ զիս, ողորմեա ինձ.

Կողկողիմ Տայասայ պոռ-
նըկին պէս: Մազդազենա-
ցոյն կատարեալ գարձը
սուր ինձ: Աօղոսս Պօղոսի
նման սուրբ ըրէ. Պետրոսի
արցունքովը զիս սրբէ.
Լուսաւորչայ չարչարան-
քովը, և ամենայն սրբոց
ճգնութեամբը ազատէ զիս
իմ մեղքերէս, մանաւանդ
սուրբ պատարագիս ար-
դիւնքովը փոխէ զիս ի մե-
ղաւրէ յարդար, քարեղէն
սիրտս ի մարմնեղէն, հին
մարգս ի նոր մարդ. ան-
սուրբս ի սուրբ:

Առաջադրութիւն:

Երկրորդ՝ կ'առաջադը-
րեմ քու շնորհքովդ աս-
կից ետև յանձն առնել
մեռնիլ՝ քան թէ մէյ մ'աւ
քեզ մեղքովս վշտացընել,
արիւն թափել մարտիրո-
սի պէս քան թէ ուրանաւ
իմ պարտքս աստուած-
պաշտութեան: Դու գիտես,
տէր, ստեղծող սրտիս, որ
կ'ուզեմ, կը փափաքիմքեզ
ծառայել, զքեզ պաշտել,
զքեզ սիրել ի բոլոր սրտէ.
բայց իմ տկարութեամբս
և չարութեամբս հետեւող
կ'ըլլամմարմնոյ քան հոգ-

ոյ, աշխարհի քան Աս-
տուծոյ: Ուստի կ'աղաչեմ,
դու ամենակարող՝ ամե-
նիմաստ և ամենաքարի
տէր իմ, իմ տկարութիւնս
զօրացո, իմ տգիտութիւնս
սորվեցո՛, իմ չարութիւնս
վերցո, մարմինս հոգւոյս
հնազանդեցո՛, աշխարհի
չար օրինակներէն հեռա-
ցո՛. սատանային փորձու-
թիւններէն ապրեցո՛: Ես
ինծմով չեմ կրնար խոսու-
րիլ չարէ և առնել զբա-
րի, բայց քեզմով ամէն
բանի կարող կ'ըլլամ. տէր
զօրութիւն իմ, տէր հաս-
տատիչ իմ, տէր ապաւէն
իմ, տէր փրկիչ իմ:

Ողջոյն տուրին առենլու:

Տէր, քու սիրոյդ համար սիրով կը հաշառուիմ ամենուն հետ, որ դուն ալ ինծի հետ հաշտ ըլլաս մարդասէր. ամէն թշնամեացս կը ներեմ, ինչպէս դուն ալ միշտ ինծի կը ներես, ներողամիտ տէր. որպէս զի կարենամ համարձակ աղօթել, թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց :

Առար սուրին.

Ո՞ւ տէր, պիտի ըլլայ, Երբ պիտի ըլլայ, որ ես մեղաւորս ալ սուրբ ըլլամ, ի մարդկանէ հրեշտակ դառնամ, ու գամերւ կինք բոլոր սուրբերու հետ՝ հրեշտակներու հետ միատեղ քեզ երգեմ երեք սրբեան օրհներգութիւնը լիասիրտ լիաբերան յաւիտեան, ու ծարաւած սիրտս զովացընեմ քու անբաւ կարօտովդ, Աստուած սըրտի իմոյ, բաժին իմ, Աստուած յաւիտեան. բաժին իմ ես դու տէր. ծարաւի

է անձն իմ առ քեզ Աս-
տուած, Երբ եկից երեւե-
ցայց երեսացդ Աստուծոյ
և յազեցայց յերեւել փա-
ռաց քոց, ով փառաւո-
րեալդ յամենայն արարա-
ծոց, քեզ փառք յաւի-
տեանս :



Առեք' ը կերպ' քիմ:

Ճշմարտապէս խոստո-
վանիմ և հաւատամ, և հա-
ւատով երկիր պազանեմ,
զի դու ես Փրիստոս զառն
Աստուծոյ՝ որ բառնաս ըզ-
մեզս աշխարհի: Դու նոյն
ես՝ որ վերնատունը զքեզ
տուիր մեզ կերակուր՝ հա-
ցին ու գինիին տեսքո-
վը. հիմա ալ զնոյն խոր-
հուրդ կատարեցիր քա-
հանային բերնովը, որ
քու դիմացէդ ըսաւ, Այս
է մարմին իմ, այս է ա-
րիւն իմ: Դու նոյն ես՝ որ
խաչին վրայ նոյն պատա-

բազը մատուցիր, որ հաշ-
տեցընէս զՀայր ընդ ա-
րարածս. և նոյն պատա-
րազը քահանայն քու կող-
մանէդ ժառուց անելով՝
կը հաշտեցընէ մեղաւոր-
ներս ամէն օր:

Հայր Երկնաւոր, ընդու-
նէ քու Միածնիդ հետ մեր
սրտին պատարագն ալ, և
զմեզ ճանչցիր որպէս եղ-
բարս Յիսուսի անդրանիկ
մեր եղբօրը. որ ինչպէս
ինքն է բնութեամբ հա-
րազատ որդի, մենք ալ
շնորհքով քու որդիքդ ըլ-
լանք, և չբաժնուինք քեզ-
մէ ու իրմէն յաւիտեան:
Եւ դու Հոգիդ սուրբ

Աստուծոյ, որ աղաւնիի
տեսքով երեւցար Յիսուսի
վրայ ի Յորդանան, ու հի-
մա ալ իջար աներեւոյթ
կերպով իր մարմնոյ և ա-
րեան խորհրդոյն վրայ, ե-
կուր, աղաչեմ, մեր վրայ
ալ հանգչէ՛ հեզիկ աղաւնիի
պէս ու սրբելով զհոգի և
զմարմին մեր՝ ըրէ արժա-
նաւոր բնակարան սուրբ
Երրորդութեանդ, Հօր և
Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ.
ամէն:

Ընդ որս և մեզին:

Ո՛վ ամենասուրբ Եր-
րորդութիւն, որ ընտրեցեր

զամենայն սուրբս քո, և
ամենուն թագուհի ըրիր
զամենասուրբ կոյս Մա-
րիամ Աստուածածինը,
անոնց անուանը ու ար-
դեանցը յիշատակովը
սուրբ սեղանիս առջենը,
մանաւանդ զօրութեամբ
նոյն սուրբ պատարագիս
սուրբ ըրէ զիս ալ, և բո-
լոր սուրբ եկեղեցւոյն որ-
դիքը. կենդանիքը պահէ
քու շնորհացդ մէջ, և մեր
ննջեցելոց հանգիստ շը-
նորհէ յարքայութեան. ո-
ղորմէ՛ մեր ծնողաց և ազ-
գականաց հոգիներուն, և
ամենայն հաւատացելոց:
Ողորմէ՛, ողորմէ՛ հոգւով

մեռած կենդանիներուն դ
անզեղջ մեղաւորներուն,
դարձ տուր ամենայն մո-
լորելոց. որովհետեւ ա-
մէնքն ալ քու ձեռքիդ
ստեղծածն են և զին ան-
զին արեան անարատ զա-
ռինն Աստուծոյ, որ ի վե-
րայ սրբոյ սեղանոյս:

Հայր մերը, ոչ Միայն սուր-
բ միատեղ ըստ: Ի սուրբ ի
սուրբին խօսքերը միտք առ,
երկրոպագէ, ոչ ըստ:

Սրտովս երկրագելով՝
փափաքով կը պազնեմ,
Յիսուս փրկիչ իմ, քու
սուրբ հինգ վէրքերդ, ուսա-

կից որ բխեց ինծի կենաց
աղք իւրը , փրկութեան
յոյսը , ճշմարտութեան
լոյսը , ազատութեան զի-
նը , ներովութեան առա-
տութիւնը , մարդասիրու-
թեան գութը , ամէն բա-
րիքներուն գանձը : Ո՞վ
խաչելեալ սէր իմ , Տէր
իմ , այս ի՞նչ չնորհք էր
զոր ինծի ըրիր , իմ վրաս
կնանքդ դրիր , որ ես յա-
ւիտենական մահուանէ
խալըսիմ . ինծի համար
չարչարուեցար , որ ես
հոգւովս հանգչիմ . ինծի
համար մեռար , որ ես
կենդանանամ . ինծի հո-
գեւոր կերակուր եղար ,

որ ես ապրիմ հոգւով , և
սուրբ մարմինդ ճաշակե-
լով՝ իրաւունք ունենամ
յարութեան փառաւո-
րեալ մարմնով : Աէր ա-
նուն Յիսուս , սիրով քով
ճմլեա՝ սիրտիմ քարեղէն:
~~Տենչալի տեսլեամբդ՝ տուր~~
ինձ յագենալ , Տէր Յի-
սուս Քրիստոս : Յօղ ա-
րեան քո , Տէր , ցողեա ի
հոգիս , ցնծասցէ անձն
իմ :

Գոհանամբ զբեն Տէրին :

Գոհութիւն քեզ անբաւ
Հայր Երկնաւոր , որ Միա-
ծնիդ պատարագն ըն-

դունեցիր մեր հաշտութեանը ու փրկութեանը համար։ Կ'աղաքէմ, մի զրկեր զիս ալ ի մասնակցութենէ սուրբ խորհըրդոյս։ թէ և արժանի չըլլամ սրբութիւն առնել, գոնէ փափաքով մասնակից ըլլամ հոգեւոր հաղորդութեան։ Գոհութիւն քեզ անչափ, քրիստոս թագաւոր, որ զիս արժանի ըրիր ներկայ գտնուելու սուրբ պատարագիդ։ Կ'աղաքէմ, մասնակից զիս ըրէ փշրանքի սուրբ սեղանոյդ՝ որ ի վերնատան և կաթուածոց սուրբ արեանդ՝ որ ի Գողգոթա.


որուն մի միայն կաթիլը զիս կրնայ բժշկել ամէն հոգեւոր հիւանդութենէն, քաւել իմ բոլոր մեղքելս, ու սուրբ ընել և միացընել զիս ընդ սրբութեանդ սրբոց։
Գոհութիւն և օրհնութիւն քեզ ի բարձունս ամենասուրբ Հոգիդ, որ իմ սրտիս կարօտը ու բաղձանքը կատարեցիր սուրբ պատարագը տեսնելու։ Տուր ինծի, կ'աղաքէմ, մասնաւոր շնորհք մը, որ այս պատարագիս բարիքը ճանչամ, յարգը զիտնամ, պտուղը տեսնեմ՝ վարքս աղէկի փոխելով,

առաքինութիւն վաստըկե-
լու ետևէ իյնալով և սըր-
բութեամբ միանալով ի
սէր քո ով աղքիւր սիրոյ:

Օրհնեալ եղերուշին:

Օրհնեալ, զովեալ և փա-
ռաւորեալ՝ երիցս սուրբ
և մի տէր, Երրորդութիւն
անբաժանելի. օրհնէ զիս
կ'աղաչեմ և իմ ընտա-
նիքս և ազգականներս ու
բարեկամներս, բարերար-
ներս ու չարարարներս.
որսէս զի ամէնքս ալ քու
ճամբէդ դուրս չելլանք, և
երախտեացդ ապերախտ
չըլլանք, հապա զործով

երախտագէտ ըլլանք, ու
զքէզ փառաւորենք այժմ
և միշտ և յաւետեանս յա-
փառենից. ամէն:



Կ Բ Կ Կ Ո Ւ Ա Ն

Ա. Դ. Թ. Պ.

Հոգւով և ճշմարտութեամբ քեզ երկրպագելով, և սրտովս ծնրադրութիւն ընելով՝ գոհանամ գքէն. տէր Աստուած իմ, որ այս օրս ալ ինձի պարգեւեցիր ողջ առողջ անցընել, ու իրիկունը հասնիլ. որ ցորեկուան աշխատան-

քէն ետեւ զիշերը հանգչիմ, որով կարենամ նորէն աշխատիլ .ի փառքու և յօգուտ հոգւոյս: Կրկին կրկին շնորհակալ եմ քու անբաւ սիրոյդ, որ Եիւր կերպով բարիք ինձի ըրած ես ինչուան հիմա հոգեսր ու մարմնաւոր, և այսու ամենայնիւ միշտ կը ներես իմ պակսութիւններուս, կը համբերես իմ ապերախտութեանս, կը սպասես գարձիս ու ապաշխարութեանս: Դու տէր գթած՝ երկայնամիտ և բազում ողորմ, լոյս և շնորհք տուր ինձի, որ իրիկուան

մթուն միտքս բացուի ,
ու ճանչնամ ամէն սխալ-
մունքս , ու զիս շոկեմ .
վասն զի աղէկ գիտեմ
որ այս բոլոր օրս ալ շատ
անգամ սխալեցայ մտքով ,
իսոսքով ու գործով : Կը
ցավիմ ճշմարիտ սրտանց ,
որ ինչպէս որ պէտք էի
այնպէս զքեզ չիսիրեցի ,
որով եղբայրս իրութենէ
ալ շատ պակսեցայ . ա-
ւելի անձնասիրութեամբ ,
հալարտութեամբ , նախան-
ձով ու բարկութեամբ շար-
ժեցայ . (մանաւանդ այս
այն յանցանքին տէրը ե-
ղայ այս օրս ...) մեղայ ,
մեղայ , կը զղջամ :

Ողորմնա ինձ Աստուած ,
ըստ մեծի ողորմութեան
քում , եւ ըստ բազում զը-
թութեան քում քաւեա
զանօրէնութիւս իմ : Յօ-
դեա յիս մշտկաւ և սուրբ
եղէց , լուա և քան զծիւն
սպիտակ եղէց : Աիրտ
սուրբ հաստատեա յիս ,
Աստուած , և զհոգի ուղիղ
նորոգեա ի փորի իմում :
Նորոգող հնութեանց նո-
րոգեա և զիս , նորոգ զար-
դարեա : Ի ձեռս քո յանձն
առնեմ զհոգի իմ . քեզ
փառք , թագաւոր իմ և
Աստուած իմ :

Զերեկոյի զաղօթս մեր
ընկալ, Տէր, բարեխօսու-
թեամբ ծնողի քո և ա-
մենայն սրբոց, և առա-
քեա ի մեզ, Տէր, զօգնու-
թիւն յերկնից յաթոռոյ
սրբութեան քո:

Գրիգորի Նարեկացքոյ աղօրք
ընդդեմ արհաւրաց գիշերայնոց

Ծնկալ քաղցրութեամբ,
Տէր Աստուած հզօր, ըզ-
դառնացողիս զաղաչանս:
Մատիր գթութեամբ առ
պատկառեալս դիմօք: Փա-
րատեա ամենապարզ և
զամօթական տիրու-
թիւնս: Բարձ յինէն ո-

Պորմած՝ զանբերելի ծան-
րութիւնս : Անջրպետեա
հնարաւոր զմահացու-
կրթութիւնս : Աւարեա
միշտ յաղթող զիսաբողին
հաճութիւնս: Բացագրեա
վերնային զմոլելոյն մա-
ռախուղ: Կնքեա կեցու-
ցիչ՝ զկորուսչին ընթաց-
մունս: Յրուեա ծածկա-
տես՝ զըմբռնողին չար
գումունս: Խորտակեա ան-
քնին զմարտողին դիմեց-
մունս: Տեառնագրեա քո
անուամբդ զլուսանցոյց
երդ յարկիս: Պարփակեա
քո ձեռամբդ զառաստաղ
տաճարիս: Գծագրեա քո
արեամբդ զմուտ սեմոց

սենեկիս : Կերպացո զքո
նշանդ ի հետո ելից մաղ-
թողիս : Ամրացո քո ա-
ջովդ զհանգստեանս խըշ-
տի : Մաքրեսցես ի հաղ-
բից զծածկարան անկող-
նոյս : Պահեսցես քո կա-
մօքդ զտառապեալ անձն
ոգւոյս : Անխարդախ ա-
րասցես զքոյ շնորհեալ
շունչ մարմոյս : Կացուս-
ցես շրջափակ զպար զօ-
րուդ երկնայնոյ : Կարգես-
ցես ի դիմի ընդդէմ դի-
ւացն դասու : Տուր հան-
գիստ բերկրութեան մա-
հահանգոյնս նիրհման ի
խորութեան գիշերիս , բա-
րեխօսութեամբ հայցուա-

ծոց սրբոյ Աստուածած-
նիդ և ամենայն ընտրե-
լոց : Ամփոփեալ պարու-
րեա զպատուհան տեսու-
թեանց զգայարանացս ի-
մաստից , անզարհուրելի
զետեղմամբ ի ծփական
խովութեանց , կենցաղա-
կան զբաղմանց , անրջա-
կան երազոց , խօլականաց
ցնորից , յիշատակաւ քոյ
յուսոյդ՝ անվաս ելի
պաշտպանեալ : Եւ սթա-
փեալ վերստին ի նընջ-
մանէ ծանրութեան՝ ամե-
նազգաստ արթնութեամբ ,
հոգենորոգ զուարթու-
թեամբ ի քեզ արձանա-
ցեալ , զայս ձայն մաղ-

թանաց բուրմամբ հաւա-
տոց քեզ ամէնօր հնեալ
թագաւոր փառաց անճա-
ռից՝ փառաբանողաց
երկնագումար խմբից եր-
գակցեալ յերկինս առա-
քել։ Զի դու փառաւորեալ
ես յամենայն արարածոց
յաւիտենից. ամէն։

Մաղրանք առ սուրբ Կոյսի։

Անկանիմք առաջի քո
Աստուածածին, և աղա-
չեմք զանարատ զկոյսդ.
բարեխօսեա վասն ան-
ձանց մերոց, եւ աղաչեա
զՄիածին որդիդ՝ փրկել
զմեզ ի փորձութենէ եւ

յամենայն վտանգից մե-
րոց։ Առ քեզ ապաւի-
նիմք ամենասրբուհի,
գերազոյն և հրաշալի և
բաշխող բարութեանց, աղ-
բիւր ես ծարաւեաց և հան-
գիստ աշխատելոց, եւ ե-
ղեր վերընկալ աստուա-
ծային բանին։

Երգ առ սուրբ Աստուա-
ծածին։

Մայր սուրբ սքանչելի
լուսոյն, որ զԱստուածն
ամենայն յաւիտեանց յո-
րովայնի քում կրեցեր, և
ցնծութիւն աշխարհի ծը-
նար զԲանն Աստուած. ա-
ղաչեմ։

Ապար սուրբ բարեխօս
սեա:

Աղաչեա վասն մեր զառ
ի քէն զմարմնացեալն Աս-
տուած. որ խոնարհեցաւ
ի հայրական ծոցոյ, էառ
մարմին ըստ մարդկային
բնութեանս առնել խա-
ղաղութիւն յերկինս և յեր-
կրի. աղաչեմք:

Աղաչեա. Ներել մեզ
անտես առնել զյանցանս
մեր, և տալ օգնականու-
թիւն ընդդիմակաց լինել
հակառակամարտիցն ի
պատերազմի. աղաչեմք:

Աղաչեա. Զի լռեսցին
պատերազմունք, դադա-
րեսցին յարձակ մունք

թշնամեաց, տնկեսցի սէր
և արդարութիւն ի յեր-
կրի. աղաչեմք:

Աղաչեա. Աճեցուցանել
յերկրի մերում զքաղցր
բղիումն աղբերաց. զա-
ռատ պտղաբերութիւնն
բուսոց եւ տնկոց՝ առ ի
զուարճալի լինել ամենայն
հարկաւոր պիտոյից մե-
րոց. աղաչեմք:

Աղաչեա. Զի միաբաշ-
նեսցէ զեկեղեցի իւր սուրբ՝
շինեալ ի վերայ հիման
առաքելոց և մարգարէից.
պահել անարատ մինչեւ
յօր երեւելոյ զալստեան
իւրոյ. աղաչեմք:

Աղաչեա վասն մեր,

Արքունի, զՄիածին քո
զորդի եւ վասն հոգւոցն
հանգուցելոց՝ ընդուն եւ
յարքայութիւնն երկնից,
և տալ մասն և բաժին ընդ
սուրբս ամենայն. աղա-
չեմք :

Յիշեա տէր եւ ողորմեա:
Եւ ևս առաւել զյոր-
դորումն սիրոյ և զգործս
բարեաց պարզեւել մեզ
խնդրեմք :

Տուր մեզ, Տէր Աօ-
տուած մեր:

Զանձինս մեր եւ զմի-
մեանս Տեառն Աստուծոյ
ամենակալին յանձն ա-
րասցուք :

Քեզ Տեառնդ յանձն եւ
դիցուք :

Ողորմեաց մեզ տէր Աօ-
տուած մեր ըստ մեծի ո-
ղորմութեան քում. ասաս-
ցուք ամենեքեան միաբա-
նութեամբ :

Տէր ողորմեա, Տէր ո-
ղորմեա. մայր սուրբ բա-
րեխօսեա առ Տէր վասն
մեր:

Աղօրք առ սուրբն Յովակի:

Սուրբ Յովսէփաստուա-
ծահայր, որ Յիսուսիս
հայր կոչուեցար, կոյս վե-
սայ ամենասուրբ կոյս
Աստուածածնի, ինծի ալ
հայրութիւն ըրէ կ'աղա-
չեմ բոլոր կենացս մէջ

ինչուան ի մահ. եւ ինչ-
պէս որ քեզի պէս երջա-
նիկ մահ ունեցող չէ ե-
ղած, որ գլխուդ քովը
կեցեր էին Յիսուս և Մա-
րիամ, ինծի ալ դուն հա-
սիր մահուանս ատենը.
և այս սրտով հիմակուընէ
զիս քեզ կը յանձնեմ, որ
հոգիս քու ձեռքովդ յանձ-
նես Յիսուսի և Մարիա-
մու ձեռքը:

Ի տօնի սրբոյն Յովհաննու
Մկրտչ:

Ո՛վ երանելիդ ի մէջ
սրբոց, որ Յիսուսին բեր-
նովը գովուեցար, թէ քե-

զի նման սուրբ մը չէ
գտնուած աշխարհիս վը-
րայ, հիմա այն երկնային
փառքիդ մէջէն նայէ այ-
սօր իմ վրաս, ով սուրբդ
Աստուծոյ, ու զօրաւոր
շնորհք մը ընդունէ քու
վարքիդ հետեւելու, մա-
նաւանդ շնորհք երկիւղին
Աստուծոյ, շնորհք ճգնու-
թեան եւ ապաշխարու-
թեան:

Դու էիր որ խօսքով ալ
վարքովդ ալ ապաշխա-
րութիւն քարոզեցիր: Ես
որ այսօր քու սուրբ տօնդ
կը տօնեմ, եկեր առջեւդ
ընկեր եմ յուսահա-
տուած. ինչ պատասխան

ինչուան ի մահ . Եւ ինչ-
պէս որ քեզի պէս երջա-
նիկ մահ ունեցող չէ ե-
ղած , որ գլխուդ քովը
կեցեր էին Յիսուս և Մա-
րիամ , ինծի ալ դուն հա-
սիր մահուանս ատենը .
և այս սրտով հիմակուընէ
զիս քեզ կը յանձնեմ , որ
հոգիս քու ձեռքովդ յանձ-
նես Յիսուսի և Մարիա-
մու ձեռքը :

Ի տօնի սրբոյն Յովանենու
Մկրտչի :

Ո՞վ երանելիդ ի մէջ
սրբոց , որ Յիսուսին բեր-
նովը գովուեցար , թէ քե-

զի նման սուրբ մը չէ
գոնուած աշխարհիս վը-
րայ , հիմա այն երկնային
փառքիդ մէջէն նայէ այ-
սօր իմ վրաս , ով սուրբդ
Աստուծոյ , ու զօրաւոր
շնորհք մը ընդունէ քու
վարքիդ հետեւելու , մա-
նաւանդ շնորհք երկիւղին
Աստուծոյ , շնորհք ճգնու-
թեան եւ ապաշխարու-
թեան :

Դու էիր որ խօսքով ալ
վարքովդ ալ ապաշխա-
րութիւն քարոզեցիր : Ես
որ այսօր քու սուրբ տօնդ
կը տօնեմ , եկեր առջեւդ
ընկեր եմ յուսահա-
տուած . ինչ պատասխան

Ալիտի տամ Աստուծոյ :
Ես որ մեղքի պատճառ
ներէ չեմ փախչիր, աչքս՝
ականջս՝ բերանս չեմ ըզ-
գուշացըներ, առջի ըրած
մեղքերուս համար ալ
մեծ մեղաւոր ըլլալով՝ ան-
հոգ եմ կեցեր ապաշխա-
րելու, խոստովանելու և
ճգնութիւն քաշելու. հի-
մա յոյսս միայն քու վրադ
դնելով՝ կ'աղաշեմ որ շը-
նորհք առնելով փրկու-
թեան ճամբան զիս բերես :
Ի՞նչ շփոթութիւն կը
բերէ ինձի սատանան, ի՞նչ
որ աղօթքիս ձանձրու-
թիւն բերել կու տայ, խոս-
տովանութիւնը ծանր բան

մը կը ցուցընէ. ասոնք
ամէնը դուն փարատէ ,
լուսաւորէ, փորձութիւն-
ներէ զիս պահէ քու ար-
դեանցդ եւ փառացդ միջ-
նորդութեամբ : Վասն զի
զիտեմ թէ որքան մեծ է
փառքդ, այնչափ ալ մեծ
է քու բարեխօսութիւնդ :

Աղօրք ի տօնի
Ս. Գրիգորի Լուսաւորչի:

Ո՛վ ճշմարիտ հովիւ
հոգւոց, նայէ մէյմը եր-
կընքէն իմ խեղճութեանս
ու ողորմելիութեանս վլ-
րայ. լսէ այսօր իմ ձայ-
նիս. չեմ արժանի քու

ողորմութեանդ, ինչու որ՝
կամաւորապէս մեղանչե-
ցի: Բայց քու բարեխօ-
սութիւնդ այսօր քու տօ-
նիդ օրը զօրաւոր է ա-
ռաջի Աստուծոյ. մի՛ բար-
կանար վրաս՝ այլ ողորմէ.
մի՛ զրկեր զիս այսօր քու
շնորհքէդ, վասն զի քու
անունդ վրաս կոչուած
է. քու որդիդ եմ. պտուդ
եմ քոց չարչարանաց եւ
աղօթից. իմ կորսուելովս
սառանան չուրախանայ,
չըսէ որ՝ քու զաւկէդ
մէկը կորսուցուցի:

Ինչպէս որ ճշմարիտ
հաւատքիդ զիս ժառանգ
ըրիր, այնպէս ալ այսօր

քուկին վարքիդ հետեւող
ըրէ, որ հարազատ որ-
դոյ պէս վարքով ալ
քեզի նմանիմ: Վասն ա-
նուան քո, ով հայր ե-
րանեալ, առ ինծի այսօր
այս շնորհքը, որ ասկէց
եւրը բարեկործութեանց
հետ ըլլալով արքայու-
թեան ժառանգ ըլլամ.
Երկինքը քովդ նստելով
Աստուծոյ երեսը տեսնե-
լու ու քեզի հետ մէկտեղ
զԱստուած փառաւորելու
արժանի ըլլամ. այն ա-
տենը երեւնամ, քու հա-
րազատ որդիդ, քու ար-
դեամբքդ եւ բարեխօսու-
թեամբ փրկութիւն զըտ-
նելով յԱստուծոյ:

ի տօնի սրբոյն Ահառնի ամա-
պատականի:

Ո՞վ սուրբ հայր Անտոն,
զլուխ ճգնաւոր անապա-
տականաց եւ առաջնորդ
հոգեւոր վարուց, որ այս
օրս քու սուրբ տօնիդ օրն
է, ո՞վ սուրբդ Աստուծոյ,
իմ քաշածներս տես հի-
մա. զօրաւոր շնորհք մը
Հոգւոյն սրբոյ առ ինծի
համար, որ ես ալ իմ
վարքս բոլորովին փոխեմ,
քու վարուցդ հետեւիմ:
Յիշէ՛ հիմա ինչ փառքի
մէջ կը զմայլիս, քաշած-
ներուդ վարձքը կը վայե-

լես. իսկ ես այսպէս ողոր-
մելութեան մէջ կը տա-
ռապիմ, աշխարհիս՝ մար-
մոյ եւ սատանայի փոր-
ձութիւնները կը քաշեմ.
դու որ այն փորձութիւն-
ները քաշելով վրայ ե-
ւար՝ յաղթեցիր, վերէն
երկնքէն վրաս նայելով
փորձ եղողի պէս ողորմէ:

Ո՞վ հզօր պաշտպան և
բարեխօս, մեղքէն զմեզ
պահէ, Աստուծոյ բարկու-
թիւնը մեր վրայէն հե-
ռացուր, վասն զի քու
հզօր պաշտպանութեանդ
յանձնուեր ենք, քեզի ենք
ապաւիներ հաւատով:
Քուկին բարեխօսու-

թեամբ , ով սուրբդ Աս-
տուծոյ , արժանի ըրէ
քրիստոնէական հանգըս-
տութեամբ աշխարհիս
մէջ անփորձ նստիլ , "Ի
բարի գործերու հետ ըլ-
լալով՝ անդին ալ արքա-
յութեան մէջ զքեզ տես-
նել , եւ քեզի հետ մէկտեղ
զամենասուրբ Երրորդու-
թիւնը միշտ փառաւորե-
լու արժանի ըլլանք . ա-
մէն :

Աղօրք առ ամենայն սուրբս :

Սուրբ Յոհաննէս Մը-
կըրտիչ , սուրբ Ստեփա-
նոս նախավկայ , սուրբ

առաքեալք եւ մարգարէք ,
մարտիրոսք , ճգնաւորք ,
կուսանք , հայրապետք ,
վարդապետք եւ ամենայն
դասք սրբոց , բարեխօս
եղիք Աստուծոյ առջեւ ին-
ծի համար այժմ եւ ի ժա-
մու մահուանս . ամէն :

Ինն դասք սուրբ հրեշ-
տակաց , հազարք հազա-
րաց եւ բիւրք բիւրուց , որ
կայք առաջի Աստուծոյ ,
մեզի համար աղաչեցէք
որ ճշմարիտ աստուած-
պաշտութեամբ այս ան-
ցաւոր կեանքս անցնելով՝
գանք յերկինս ձեզի հետ
յաւիտեան փառաւորենք
սուրբ Երրորդութիւնը :

Ապղամնի վասն նելեցելոց:

Հոգւոցն հանգուցելոց
Քրիստոս Աստուած արա
հանգիստ և ողորմութիւն.
ողորմած Տէր, ողորմեա
հոգւոցն մեր ննջեցելոց.
և հանգ՝ զնոսա յարքա-
յութեան քում ուր ժո-
ղովքն են սրբոց ի խա-
ղաղութեան հոգւով հե-
զութեան յերկնից բարու-
թիւնսն:

Ապղմոս ձեթ:

Ի խորոց կարդացի առ
քեզ Տէր, Տէր, լուր ձայնի
իմում:

Եղիցին ականջք քո ի
լոել զձայն ազօթից իմոց:

Թէ զանօրէնսւթիւնս իմ
քննես Տէր, Տէր, ո՛ կարէ
կալ առաջի քոյ, զի ի
քէն է քաւութիւն:

Վասն անուան քո համ-
բերի, Տէր. համբեր անձն
իմ բանի քում, յուսացաւ
անձն իմ ի Տէր:

Ի պահէ առաւօտու
մինչև յերեկոյ, ի պահէ
առաւօտու յուսացաւ իս-
րայէլ ի Տէր:

Ի տեառնէ է ողորմու-
թիւն բազում, և ի նմանէ
է փրկութիւն. և նա փր-
կեաց զիսրայէլ յամենայն
նեղութեանց նորա:

Տասուշերկու Հայր մեր, տասուշերկու Ողջոյն լուս՝ այսպէս դիտաշորհիչն դնելով:

1. 2. 3. Սուրբ Երրորդութեան, որ աշխարհիս խաղաղութիւն տայ, եկեղեցւոյ հաստատութիւն, մեր ազգին պայծառութիւն բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնի, սրբոյն Պետրոսի և սրբոյն Գրիգորի Լուսաւորչի:

4. Ամենայն սրբոց, իրենց յանձնելով զմեզ ու մեր ընտանիքն՝ որ սուրբ ըլլանք. և վասն առողջու-

թեան հիւանդաց, միխթարութեան աղքատաց և վշտացելոց, յաջողութեան ճանապարհորդաց, օգնութեան ամենայն անօգնականաց:

5. Հինգ վիրաց Յիսուսի, ծնողաց եւ ազգականաց հոգւոյն համար:

6. Համօրէն ննջեցելոց հոգւոց համար:

7. Եօթն ցաւոց սուրբ Աստուածածնի՝ անզեղջ մեղաւորաց դարձին համար:

8. Սուրբ Անտոն աբբայի, կրակէ պահելու համար. սուրբ Յակոբայ Մծբնայ հայրապետի, ու

սրբոյն Հոռքոսի՝ ժանտա-
մահէն պահելու . սուրբ
Գրիգոր Նարեկացւոյ ,
սուրբ Ոսկեբերանի, սուրբ
Անտոնի Պատուացւոյ՝ ա-
մէն փորձանքէ խալըսելու:

9. Ինը դաս հրեշտակ-
ներու, որ պահէն պահ-
պանէն զմեզ ամէն չարէ,
ու յորդորէն առաջ տանին
զմեզ յամենայն բարիս:

10. Միքայէլ եւ Գաբ-
րիէլ հրեշտակապեսաց ,
և Յովսեփայ Աստուածա-
հօր, որ իրենց բարեխօ-
սութեամբը տասը պա-
տուիրանքն ալ աղէկ պա-
հենք . ու պարզերես ա-
ւանդենք մեր հոգին իրենց
ձեռքը :

11. Պաշտպան եւ ա-
նուանակից սրբոյն , որ
իրենց վարքին հետևելով՝
իրենց քովը հասնինք եր-
կինքը :

12. Խրկոտասան առա-
քելոց . որ իբրև բարեկամք
Քրիստոսի հաշտեցնեն
զմեզ Աստուծոյ հետ . եւ
մեզի ջատազով ըլլան մա-
հուան օրը , ու վերջի դա-
տաստանին :

Մաղրանք:

Փառք քեզ , Տէր Աս-
տուած մեր , որ պարզեւե-
ցեր զօրս բարեաւ և խա-
ղաղութեամբ անցուցա-
ձեռքը :

նել։ Ամրդասէր Աստուած՝ զառաջիկայ զիշերս որ ի վերայ մեր զալոց է, ի մեղաց փրկեա, ի չարեաց ազատեա, ի զործս բարիս առաջնորդեա։ Առաւօտու օրհնութեանցն եւ փառաբանութեանցն արժանի արագամենայն հաւատացեալս անուանդ քում սրբոյ, և պահեա ի խաղաղութեան։

Տէր Աստուած մեր, տուր զքո խաղաղութիւնդ ամենայն աշխարհի. բարձ զցասումն եւ զպատուհաօն ի յարարածոց։ Ողորմեա հարց և եղբարց մերոց՝ կենդա-

նեաց եւ հանգուցելոց։ Ողորմեա եկեղեցի շինուաց, երախտաւորաց, պտղատուից, սպասաւորաց, և այնոցիկ՝ որք ընդհովանեաւ սուրբ տաճարիս են հանգուցեալ։

Տէր Աստուած, օգնեաթագաւորաց քրիստոնէից, եւ իշխանացն բարեպաշտից, զօրաց եւ զաւակաց նոցին՝ պահելով ի խաղաղութեան։

Տէր Աստուած մեր, պահեա զառաջնորդս եւ զեղբայրութիւնս մեր ամբողջ եւ անխոռվ ի կամսողորմութեան քոյ։


Նշանաւ սուրբ եւ պա-

տուական խաչիւ քո հա-
լածեա զերեւելի եւ զանե-
րեւոյթ թշնամին ի սահ-
մանաց մերոց եւ ի բնա-
կութենէս մերմէ: Փրկեա
զմեզ ի հրոյն յաւիտենից:
Եւ քեզ փառք յաւիտեանս.
ամէն:



ԿԵՐՊ ԿԵՐՊ ԱՂՅԹՔ

Որ տոեն կ'ուզգես ընելու:



Աղեկ աղօրը ընելու շնորհը
խնդրել:

Ամաչեմ Տէր առջեկ ե-
րենալ, որովհետև երբ գի-
մացդ կ'ելլեմ քու հետդ
խօսելու աղօթք ընելու
ճամբան չեմ գիտեր .
խելքս ալ կը տարտպնի,
միաքս կը ցնդի. մա-
մուվս եկեղեցւոյն մէջն

եմ, կամ պատկերի մը
առջև նոտեր եմ, հոգւովս
չեմ զիտեր ուր եմ: Ուս-
տի կ'աղաքեմ, աղօթքի
շնորհք տուր ինձի, որ
զիտնամ որու առջև կե-
ցեր եմ, ում հետ կը խօ-
սիմ, եւ ինչ կ'ուզեմ: Թա-
գաւորիդ թագաւորաց
առջև եկած եմ, որ խեղճ
աղքատի մը պէս ողորմու-
թիւնդ մուրամ, ծանր
հիւանդի պէս ցաւերուս
հնարք փնտոեմ երկնա-
ւոր բժշկէդ. ամէն խըն-
դիլքս համարձակ ուզեմ
իմ սիրական հօրմէս.
մեղքերուս թողութիւն,
ու նոր նոր շնորհքներ

առնեմ, ըրած աղէկու-
թիւններուդ շնորհակալ
ըլլամ, որ նորէն ամէն
իժիր ամէն կերպ բարիքդ
տեսնելու յոյս ունենամ:
Ուրեմն դուն ինձի ողորմէ,
աղէկ աղօթք ընելու՝ ներ-
սէն տուն տուր ինձի. հե-
ռացուր ամէն սատա-
նային փորձութիւնները,
որ կ'ուզէ միշտ աղօթքիս
արգելք ըլլալ, զիտնալով
որ ամէն բարիք աղօթքէն
կ'ըլլայ մեզի. ու աղօթքն
է արքայութեան բալլիքը:
Միանգամայն իմ ամէն
գործս ի փառս քո ըլլայ,
որով ամէն ատեն աղօթք
ընել կը սեպուի . որ

պէս զի կար ենամ քու
հրամանդ կատարել . թէ
մղարու է յամենայն ժամ
յակօթս կալ և մի ձանձ-
րանալ :

Աստուծոյ յանձնել գլեզ ու
ոչիշխերն ու :

Տէր Աստուած իմ, զի-
տեմ որ շատ անգամ սը-
խալիր եմ իմ խելքիս կա-
ռավարութեանը հաւա-
նելով՝ իմ վրաս վստահե-
լով, մեղայ, մեղայ . աս-
կից ետեւ քեզի կը յանձ-
նեմ զիս ալ, ընտանիքս
ալ, ճանչուորներս և ան-
ճանաչները, ու բոլոր աշ-

խարհքը : Դու կառավարէ
զմեզ՝ քու անբաւ իմաս-
տութեամբդ, հայրական
զթութեամբդ և ողորմու-
թեամբ : Ողորմէ մեծին ու
պատիկին, աղքատին ու
հարուստին . հիւանդնե-
րուն առողջութիւն պար-
գեւէ, խեղճերուն մխիթա-
րութիւն, ճամբորդներուն
ալ օգնութիւն, ամենուն
զործին յաջողութիւն ի
փառս քո և յօգուտ իրենց
հոգւոյն :

Տղաքները շնորհքիդ
մէջ աճին, կտրիճները՝ ե-
րիտասարդները առանց
մեղաց ապրին . ամէն
քրիստոնեայ համբերու-

թեամբ , աստուածսիրու-
թեամբ , եղբայրսիրու-
թեամբ կեանքերնին ան-
ցընեն՝ որ արքայութեան
արժանի ըլլան : Մեր նըն-
ջեցելոց թողութիւն և ա-
զատութիւն չորբէ , որ
ժամ մը առաջ արժանի
ժամ մը առաջ արժանի
ըլլան քու սուրբ տեսու-
թեանդ : Մեղաւորներուն ,
անհաւասաներուն , մոլո-
րածներուն դարձ տուր ,
լոյս տուր , շնորհք տուր ,
որ արժանի ըլլան քու
ողորմութեանդ . ամէն :

Խոսկովվանանքի սպատրասոնք
րիւն

Տէր իմ և Աստուած իմ ,
Տէր հայր մեր սիրելի ,
Տէր գատաւոր մեր ա-
հաւոր , Տէր իշխան մեր
ամենափառաւոր , Տէր
թագաւոր մեր երկնաւոր ,
Տէր փրկիչ մեր ամենե-
ցուն : Ահա քննեցի իմ
կողմանէս խղճմտանքս .
եւ այսչափ մեղք միւռքս
եկան անցած խոստովա-
նանքէն մինչեւ հիմայ :
Կ'ամաչեմ իմ ապերախ-
տութեանս , կու լամ կ'ող-
բամ որ իմ անհուն սի-

բելիս այսչափ սրդողցուցի. և քու սիրոյդ համար կը ցաւիմ, կը զղջամ ի բոլոր սրտէ, ու կ'առաջադրեմ ասկէց ետեւ ըզգոյշ կենալ ամէն կերպով, հեռանալ յամենայն որոգայթից մեղաց: Եւ ինչպէս որ չար սատանայի հետևելով չամաչեցի մեղք գործելու առեն, այսպէս ալ հիմա քու հրամանիդ հետեւելով՝ առանց խըպելու համարձակ զիս ամբաստանել կ'ուզեմ քահանային առջեւ, որ քու տեղդէ: Ուստի, տուր ինձի պարզ մտքով, յստակ ձայնով ու խոնարհ սըր-

տով խոստովանիլ ամէն զիտցածս, որ ամէն ուն թողութիւն առնեմ քու ողորմութեամբդ, եւ կարենամ հետդ հաշտուիլ, ու անուշ սէրդ վայլել. և քու շնորհքովդ զիս պահէ հիմակուց ամէն մեղքէ, և առաջնորդէ ի բարեգործութիւն, ի փառս քու ի փրկութիւն հոգւոյս. ամէն:

Յամենայն ժամ աղաւչանք իմ այս են, ի մեղաց իմոց սուրբ արա զիս Տէր, և յօտարէն պահեազառայս քո, մարդասէր Տէր:

Աղօր զ զդման՝ խոսովանու-
թենէն առաջ:

Աստուած ամենակա-
րող և ամէն բանի գերա-
գոյն տէր, Աստուած բա-
րեգութ՝ արդար և ողոր-
մած, կը սիրեմ զքեզ եւ
կը մեծարեմ բոլոր հոգ-
ւովս ամէն բանէ աւելի.
կը զդշամ իսկապէս և կը
ցաւիմ բոլոր սրտովս որ
իմ այսչափ բիւրաւոր մեղ-
քերովս քու աստուածա-
յին մեծվայելչութեանդ
դէմ մեղանչեր եմ. թող
ինձ Աստուած իմ՝ իմ մեղ-
քերս, զորոնք հիմա ես ալ

կ'առեմ ու կը զզուիմ.
ուռ Հայր ողորմութեանց
ներէ ինծի, չնչէ մեղ-
քերս, որոնց համար ոտքդ
ինկած խոնարհաբար կը
պաղատիմ, և կը յուսամ
վասն անգին արեան Որ-
դւոյ քո Յիսուսի, զոր
ինծի համար թափեց՝ նե-
րես պիտի ինծի և չնչես
բոլորովին: Աստուած իմ,
քու սուրբ շնորհացդ ալ ա-
պաւինած կ'առաջադրեմ
ասկէց եռև քու պատուի-
րաններդ պահել, մեղաց
առիթներէն փախչիլ.
գուն ալ Աստուած իմ
օգնէ ինծի, մի՛ թողուր
զիս ձեռքէդ . վասն զի

առանց քու օգնականու-
թեանդ եւ շնորհացդ՝ չեմ
կրնար մեղքերէ զգուշա-
նալ եւ զքեզ գտնել:

Աղօրք ի սկիզբն խոստովանու-
րեան

Խոստովանիմ առաջի
Աստուծոյ ամենակարողի
եւ երանուհոյ Մարիամու
միշտ կուսին, երանելոյն
Յովհաննու Մկրտչին, և
սրբոց առաքելոցն Պետ-
րոսի և Պօղոսի, և սրբոյ
հօրն մերոյ Գրիգորի Լու-
սաւորչին, եւ ամենայն
սրբոց, և առաջի քո, հայր
սուրբ, քանզի մեղայ յոյժ

խորհրդով, բանիւ և զոր-
ծով. մեղայ մեղայ մեծա-
պէս մեղայ:

Հաղորդութեան պատրաստու-
թիւն:

Ո՞վ եմ ես՝ Տէր, և ո՞վ՝
ես դու՝ Տէր, որ կ'ուզես
զալ իմ սիրոս հանգչիլ.
Տէր, չեմ բաւական եթէ ի
սիրո իմ մտանիցես, այլ
ասա բանիւ և բժշկեսցի
հոգի իմ: Բայց դու ողոր-
մած եւ ամենողորմ, ըսիր
թէ Ոչ է պիտոյ բժիշկ ող-
ջոց, այլ հիւանդաց. հի-
մա ալ կ'ըսես ինծի, ա-
հաւասիկ ողջացար խոս-

տովանանքով, Երթ այս
սուհետեւ մի՛ մեղանչեր:
Տես որ, կ'ըսես, ես զքեզ
քժշկեցի, սրբեցի մաքրե-
ցի, որ գամ հանգչիմ սըր-
տիդ մէջ իբրեւ ի վերնա-
տան Սիոնի զարդարեալ,
ու հոն քեզի հետ մէկ սե-
ղան նստիլ, ու զքեզ կե-
րակրել հոգեւորապէս, ան-
մահական իմսեղանէս պա-
տուական մարմնով եւ ա-
րեամբս, որ ասկէ ետեւ
ոչ հիւանդանաս հոգւով և
ոչ մեռնիս: Ո՛վ անբաւ ո-
զորմութեան քո, Տէր, ա-
հաւասիկ կամ ծառայ քո
(կամ աղախին քո), եւ
դիցի ինձ ըստ բանի քում:

Ես անարժանու կը փա-
փաքիմ սիրով զքեզ ըն-
դունիլ. դուն ալ, Տէր, սի-
րով զիս ընդունէ, միա-
ցուր իմ սիրոս քու սըր-
տիդ հետ, որ յաւիտեան
քեզմէ չի բաժնուիմ:

Զծնեալն ի սրբոյ կու-
սէն ընկալցուք ի սիրոս
մեր հաւատով որպէս եր-
բեմն ի զիրկսն Սիմէոն:
Մարքեա զմիտու և զխոր-
հուրդս, զի եւ մեք հաղոր-
դեսցուք սրբութեամբ ընդ
սրբոց քոց առաքելոց այ-
սօր ի սուրբ վերնատուն.
աղաչեմք, Փրկիչ, ողոր-
մեա:

Յաստուածային կայծաւ-
կունսն ի սրովքէից ան-
հպելին անմաքրապէ ս
մերձեցաք՝ զոլ պարտա-
պան քում խորհրդոյն.
շնորհեա զնոյն մաքրու-
թեամբ ի թողութիւն մե-
ղաց մերոց :

Որ վառեցար ի յարփ-
ւոյն, և ոչ կիզար ըստ
մորենւոյն, այլ ետուր ըգ-
հացն կենաց կերակուր բա-
նաւորաց, բարեխօսեա տո
քրիստոս ջնջել զգիր մե-
ղաց մերոց :

Գոհուրիւն հաղորդուելն
ետեւ:

Գոհանամ զքէն, չնոր-
հակալ եմ քեզ, Տէր Յի-
սուս, չեմ կրնար արժա-
նապէս բաւական զոհու-
թիւն քեզ մատուցանել,
որ եկար իմ աղքատ հոգ-
ւոյս տունը, ու այս անպի-
տան սրտիս մէջ բնակիլ
ուզեցիր: Թէ որ երկրա-
ւոր թագաւոր մը իմ
տունս զար, աշխարհ իմս
կ'ըլլար ուրախութենէս՝
ու ամէն բարիք անկէց կը
յուսայի . հապա դուն
երկնաւոր թագաւոր՝ որ
իմ սիրոս եկար, ինչ մեծ

փառք պատիւ է ինծի, և
անտարակոյս յոյս փըր-
կութեան հոգւոյս։ Ինչ-
պէս որ Զաքէոսի ըսիր,
Այսօր եղեւ փրկութիւն
տանս այսմիկ, ինձ ալ ըզ-
նոյն ըսէ եւ կատարէ,
քաղցր և բարերար փրկիչ
իմ Յիսուս։ Այս քու ան-
բաւ մարդասիրութիւնդ է,
սէր անուն Յիսուս, որ
չէ թէ միայն ինծի համար
խաչի վրայ մեռնիս հո-
գիս խալսելու համար,
հապա զաս միանաս ալ
ինծի հետ սուրբ հազոր-
դութեամբ։ Ուրիշ փոխա-
րէն չունիմ քեզ ընելիք
Աստուած իմ, սէր իմ,

Աստուած սրտի իմոյ, բո-
լոր սիրոս քեզ կը նուի-
րեմ, ու կը փափազիմ
ու կը պաղատիմ որ ինծ-
մէ յաւիտեան չբաժնուիս,
որ ես ալ քեզմէ չի բաժ-
նուիմ յաւիտեան։ Ասոր
համար կրկին կրկին շը-
նորհք կը խնդրեմ, որ այս
քու ինծի ըրած շնորհքի
ճանչնամ, արդիւնքդ գիտ-
նամ, մէյ մ'ալ քեզ մեղ-
քովս չի դառնացընեմ,
աշխարհ ու մարմինս ա-
տեմ, զքեզ սիրեմ. սա-
տանային չի ծառայեմ,
հապա քեզ միայն. զի ես
ծառայ քո եմ, եւ որդի
աղախնոյ եւ մօր քո ամե-

նասրբուհի Աստուածա-
ծնի . Եամենայն մտած-
մունքս՝ խօսքս եւ զործս
ի փառս քո ըլլան . և ար-
ժանի ըլլամ գալ փառա-
ւորել զքեզ ընդ Հօր և ա-
մենասուբք Հոգւոյն յա-
ւիտեանս յաւիտենից . ա-
մէն :



ԵՇՈՅԱՇԵՐԵՎԱՆԻ
ԹՎԵՐԵՎԱՆԻ

ՄՐՏԱՆՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԵՐ

Աղօրդի ատեն, ու աղօրդէ
դուքս

Ուսո ինձ առնել զկամս
քո, զի դու հս Աստուած
իմ:

Զճանապարհս քո, Տէր,
ցոյց ինձ, և զշաւիղս քո
ուսո ինձ:

Լոյս տուր, Տէր, աչաց



իմոց, զի մի երբեք նըն-
ջեցից ի մահ։

Տէր, լոյս իմ եւ կեանք
իմ, Տէր, ապաւէն կենաց
իմոց։

Օգնական իմ լեր, Տէր,
մի անարգեր զիս, եւ մի
թողուր զիս, Աստուած
փրկիչ իմ։

Պատրաստ է սիրո իմ
առ քեզ, Աստուած, պատ-
րաստ է սիրո իմ։

Գտի զոր սիրեաց անձն
իմ. կալայ զքեզ, և ոչ թո-
ղից։ Մի թողուր զիս թո-
ղուր զքեզ։

Աստուած իմ, եւ ամե-
նայն ինչ. դու իմ ես բո-
լորովին, եւ ես քո եմ ա-
մենեւին։

Տուր զոր հրամայես, և
հրամայեա զոր կամիս։

Դու ես Տէր մեր, դու
ես Քրիստոս փրկիչ մեր.
զքեզ օրհնեն անձինք մեր։
Մարդասէր Տէր վասն սըր-
բուհւոյ անարատ Մօր քո
և կուսի, և վասն Խաչի
քո պատուականի՝ ընկալ
զալաշանս մեր, եւ կեցո
զմեզ։

Խաղաղութեանց տուող
Քրիստոս, զխաղաղու-
թիւն և զողորմութիւն քո
պարգեւեա մեզ։

Յոյս կենդանութեան,
յոյս և ապաւէն փրկու-
թեան, Տէր Յիսուս, Փըր-
կեա և փարատեցո զցաւս
անձին իմոյ։

Լուր մեզ Տէր՝ լուր մեզ
աստաւածային՝ ողորմու-
թեամբ և զժութեամբ քով
խնայեա յանձինս մեր։

Փառք քեզ, Տէր, փառք
քեզ, յաղագս ամենայնի,
Տէր, փառք քեզ։
Հառաչանօք կարդամ
առ քեզ;

Գառն Աստուծոյ Յի-
սուս իմ հեզ.

Ըզքո ինձ վարս նիւ-
թեա բեհեզ,

Ըզքո սուրբ վէրս տուր
ինձ ի լեզ։

Գոչեմ առ քեզ, Տիրա-
ծին կոյս,
Յետ Յիսուսի միակ իմ
յոյս.

Խաւարելոյս հօթնաջահ
լոյս,
Քեւ փրկեցայց անտա-
րակոյս։

Ա՛ռ զաւանդ մաղթանա-
ցըս, և տուր զողորմութիւն
քո շնորհացդ։ Մեզօք մեռե-
լոյս՝ անախտ կեանք. կոր-
ծանելոյս պարտեօք՝ փըր-
կութիւն։

Շնորհեա ինձ յոյս քա-
ւութեան՝ կեանք և ապա-
ւէն. և ի տուր շնչոյս թը-
շուառի՝ առից զոգիդ քո
բարի։

Ահա դու կեանք, դու
փրկութիւն, դու բժշկու-
թիւն, դու անմահութիւն,
դու երանութիւն, դու լու-
սաւորութիւն։

Մի՛ ունայնասցի վաս-
տակն աշխատութեան
փրկականդ կրից մարդա-
ցելոյդ վասն իմ Աստու-
ծոյ: Մի ի զուր եղիցի քըր-
տանցն կաթուած խառնե-
ցեալ արեամբ ի մատ-
նութեանն աւուր գիշե-
րին: Մի՛ անշահ եղիցին
կրիցդ պտուղք, զոր կա-
րօսութեանս իմում մա-
տուցեր:

Գու լոյս ես և յոյս, և
ես խաւար և յիմար. գու
իսկութեամբ բարի գովե-
լի, և ես համայնիւն չար
ապիկար:

Երանութիւն անձկալի,
յոր զկենդանութիւն շըն-

չոյս լքանելն է ախորժելի,
զի զքեզ զտից կենդանի:
Փառաւորեա զորդիդ քո
ի քեզ՝ աստուածօրէն ինձ
հրաշագործել քաւութիւն
և ողորմութիւն՝ աղախին
Աստուծոյ և մայր, բարձ-
րասցի պատիւ քո ինև, և
ցուցցի փրկութիւն ի մ
քեւ:


Ահա կաթիլ մի կաթին
քումդ կուսութեան յանձն
իմ անձրկեալ՝ կենաց ինձ
զօրէ, Մայրգ բարձրելոյ
տեառն Յիսուսի, արար-
չին երկնի և բնաւին երկ-
րի:



ՅԱԽԱՑՈՒԹԻՒՆ

Առ վշտագին Մայր
Խաչեցելոյն :

Կայր առ խաչին՝ Մայր
ցաւագին,
Արտօսրալից ի սուզ
ներքին,
Ի տես ողորմիւր Միա-
ծնին :
Անդ անցանէր ընդ անձ
նորին,
Կախագուշակ սուր երկ-
սայրին ,



Թամիանց ի սիրու խոց
անհնարին։
Ո՞վ տեսարան ողորմա-
զին,
Ուր տագնասլէր մաքուր
հոգին
Ամէնօրհնեալ Աստուա-
ծածնին։
Վիշտք աղետից՝ ուղիք
ահազին,
Ի սիրու ամբիծ ծովա-
նային,
Ի տես ցաւոց սուրբ
Միածնին։
Ո՞ ոք երբեք ժուժէր յան-
ձին,
Ոչ արտասուել յուղը
դառնազին,
Յանչափ ցաւոց Մօրըն
Փրկչին։

Ո՞ հանդուրժէ առ ցաւ
սըրտին.
Ոչ կարեկցիլ ծնողի Բա-
նին,
Յաւակցելոյն իւր Միա-
ծնին։
Այն որ ետես զԱստուած-
որդին,
Մատնեալ առ մեղս
մարդկան ազին.
Այր ի հարուածո՛ ըս-
պանդ գառին։
Ետես զենեալ զիւր սիրե-
լին,
Հանդէսլ աչաց ի փայտ
խաչին,
Եւ մահացեալ ըզկեն-
դանին։
Սիրոյ աղբիւր Կոյս ցա-
ւազին,

Ե քոց ցաւոց հան ինձ
բաժին.

Տուր ինձ ընդ քեզ լաւ
առ խաչին:

Վառեա զիմ սիրտ ի սէր
Փրկչին,
Վասն իմ մեռեալ ան-
մահ Բանին.

Հաճոյ լինել քեզ և նը-
մին:

Աղէ արա Մայր Տիրա-
ծին,
Զի ի սիրտ իմ բեռես-
ցին,
Խաչեցելոյն վէրք հընգե-
քին:

Մասնաւորեա՝ ինձ ըստ
մասին
Զանչափ տանջանս քո
Միածնին,

Մահացելոյն սիրով
վասն իմ:

Տուր ինձ ընդ քեզ լաւ
ողբազին.

Յաւակցութեամբ իմոյ
Փըրկչին,

Յորչափ էից շունչս ի
մարմին:

Ուխտիւք խընդրեմ ես լա-
լազին,

Կալ ընդ կուսիդ մերձ
առ խաչին,

Հաղորդ լինել ցաւոց
քոյին:

Կոյս կուսանաց Աստուա-
ծածին,


Դառն արտասուքդ ինձ
քաղցրասցին՝

Թէ զիս կըցորդ առնես
նոցին:

Տուր ինձ կըրել ըգմահ
Փըրկչին,
Խաչակցութեամբ քո
Միածնին,
Յիշատակաւ վիրաց նո-
րին:
Առ իս հասցեն վէրք տն-
մեղին,
Եւ արքեցայց սիրով
Խաչին,
Վասնսիրոյ սուրբ Միա-
ծնին:
Հուր բորբոքեալ՝ սէր կեն-
սատուին:
Յիս վառեսցի ձեռամբ
քոյին.
Զի քեւ զերծայց յօրն
ահազին:
Զէն ինձ զգեցո զնըշան
Խաչին.


Եւ ամբացո մահուամբ
Փըրկչին,
Միշու ոգեպահ չնորհօք
նորին:
Ի մերկանալ հոգւոյս ըգ-
մարմին,
Քև զգեցցի զփառս երկ-
նային,
Յանճառ ի փառս ի
փառս Փըրկչին:





ԱՆՈՒԲԻ

ՎԱՐԴԱՐԱՆԻ



Ի ԽՈՐՃՈՒՐԴ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ
Ս. ԱՍՏՈՒԱՆԱՆՆԻ

Յաշուր Երկոչշաբարի, Երեք-
շաբարի և Շաբառու

Մի Հայր մեր և տասն
Ողջոյն ասասցուք, զմուաւ
ածելով զառաջին խոր-
հուրդ ուրախութեան
սուրբ Աստուածածնին .

զի յորժամ ամենակալն
Աստուած զթացեալ ի վեշ-
րայ մեր հաճեցաւ փըր-
կել զմեզ, առաքեաց ըգ-
հրեշտակապետն Գաբրիէլ
առ ամենասուրբ Կոյսն,
որ ողջունաբեր աւե-
տեօքն յղացաւ ի Հոգւոյն
սրբոյ :

Հայր մեր :

Ընդ տասանց Ողջու-
նիցս՝ բիւրս մատուսցեն
քեզ օրհնութիւնս, փա-
ռաւորեալ սուրբ Կոյս Աս-
տուածածին Մարիամ, ա-
մենայն հրեշտակը և հը-
րեշտակապետք եւ ամե-
նայն հոգիք երկնաւորք .

ընդ որս յուսամք տեսա-
նել եւ վերօրհնել զքեզ
յերկինս. ամէն :

Մի Հայր մեր և տասն
Ողջոյն ասասցուք զմտաւ
ածելով զերկրորդ խոր-
հուրդ ուրախութեան
սուրբ Աստուածածնին,
զի իբրեւ լուաւ զբանս
հրեշտակապետին եւ յղա-
ցաւ ի Հոգւոյն սրբոյ,
փութապէս զնաց ի քա-
ղաքն Յուղայ, եւ եմուտ
ի տունն Զաքարիայ եւ ետ
ողջոյն Եղիսաբեթի :

Հայր մեր :

Ընդ քսան Ողջունիցս՝
բիւրս մատուսցեն քեզ

օրհնութիւնս , փառաւու-
րեալ սուրբ կոյս Աստուա-
ծածին Մարիամ , ամե-
նայն սուրբ նահապետք
եւ մարգարէք , անմեղ
մանկունք , Մկրտիչն
Յովհաննէս եւ ամենայն
սուրբք հնոյ ուխտին . ընդ
որս յուսամք տեսանել եւ
վերօրհնել զքեզ յերկինս .
ամէն :

Մի Հայր մեր և տասն
Ողջոյն ասասցուք , զմտաւ
ածելով զերրորդ խոր-
հուրդ ուրախութեան
սուրբ Աստուածածնին .
որ իբրեւ ծնաւ անճառա-
քար զտէրն մեր Յիսուս

Քրիստոս ի Բեթղեհէմ
Հրէաստանի՝ ի քաղաքն
Դաւթի ի մսուրն անբա-
նից , հրեշտակք յերկնից
իջեալ երգեցին՝ ֆառք
ի բարձունս Աստուծոյ եւ
յերկիր խաղաղութիւն ի
մարդիկ հաճութիւն :

Հայր մեր :

Ընդ երեսուն Ողջու-
նիցս՝ բիւրս մատուսցեն
քեզ օրհնութիւնս , փա-
ռաւորեալ սուրբ կոյս Աս-
տուածածին Մարիամ , ա-
մենայն սուրբ առաքեալք
եւ աշակերտք Տեառն եւ
աւետարանիչք եւ ամե-
նայն լուսալ սակ վը-
կայիցն դասք . ընդ որս

յուսամք տեսանել եւ վեր-
օրհնել զքեզ յերկինս . ա-
մէն :

Մի Հայր մեր և տասն
Ողջոյն ասասցուք , ըգ-
մտաւ ածելով զչորրորդ
խորհուրդ ուրախութեան
սուրբ Աստուածածնին ,
զի յորժամ Փրկիչն մեր
եղե քառասնօրեայ , և լլ-
ցան աւուրբն սրբութեան
ըստ օրինացն Առվսիսի ,
էած զնա սուրբ Կոյսն ի
տաճարն՝ յանդիման առ-
նել Տեառն : Եւ ծերուն-
ւոյն Ալիմէոնի առեալ
զնա ի զիրկս իւր՝ օրհ-
նեաց զԱստուած ասելով .

Արդ արձակեա զծառայս
քո , Տէր , ըստ բանի քում
ի խաղաղութիւն :

Հայր մեր :

Ընդ քառասուն Ողջու-
նիցս բիւրս մատուցեն
քեզ օրհնութիւնս , փա-
ռաւորեալ սուրբ Կոյս Աս-
տուածածին Մարիամ ,
ամենայն սուրբ խոստո-
վանողք , հայրապետք ,
վարդապետք , միան-
ձունք , անապատականք ,
կուսանք , այրիք և ա-
րամբիք . ընդ որս յու-
սամք տեսանել եւ վեր-
օրհնել զքեզ յերկինս .
ամէն :

*
* *

Մի Հայր մեր եւ տասն
Ողջոյն ասասցուք, ըզ-
մտաւ ածելով զհինգե-
րորդ խորհուրդ ուրախու-
թեան սուրբ Աստուածած-
նին, զի յորժամ Փրկիչն
մեր եղեւ երկոտասանա-
մեայ, տարան զնա ծնողքն
ի տաճարն, և կորուսին
զմանուկն, եւ յետ երից
աւուրց գտին զնա՝ զի
ընդ վարդապետս բազ-
մեալ՝ խօսէր ընդ նոսա,
լսէր ի նոցանէ, և ուսու-
ցանէր նոցա զարքայու-
թիւնն Աստուծոյ:
Հայր մեր:

Ընդ յիսուն Ողջունիցո՞
բիւրս մատուսցեն քեզ
օրհնութիւնս, փառաւո-
րեալ սուրբ կոյս Աստուա-
ծածին Մարիամ, սրբու-
հին Աննա՝ մայր քո, եւ
Մարիամանք՝ ազգականք
քո, Մագդաղենացին եւ
Մարթա՝ սիրողք և սիրե-
լիք քո. և ամենայն կու-
սանք, այրիք և արամբիք.
ընդ որս յուսամք տեսա-
նել եւ վերօրհնել զքեզ
յերկինս. ամէն:
Փառք հօր: Այժմ և միշտ:


Աղօրք զեհի վարդարանին
Ողջ լեր Թագուհի, մայր

ովորմութեան , կեանք ,
քաղցրութիւն և յոյս մեր ,
ողջ լեր : Առ քեզ կար-
դամք վտարանդեալ որ-
դիքս Եւայի : Առ քեզ հա-
ռաչեմք միշտ՝ հեծու-
թեամբ և լալազին ի հով-
տէ աստի տրտմութեան և
արտասուաց : Եւ արդ ա-
զէ , ովք բարեխօթ մեր ,
դարձո առ մեզ զգորովա-
գութ հայեցուածս աչաց
քոց , և զՅիսուս զօրհ-
նեալդ պտուզ որովայնի
քո՛ յետ աստանօր պան-
դըխտութեանս ցոյց մեզ ,
ովք բարեբարոյ , ովք գթած ,
ովք քաղցր և անոյշ կոյս
Մարիամ . լեր բարեխօս
վասն մեր սուրբ Աստուա-

ծածին , որպէս զի արժա-
նաւորք եղիցուք խոստ-
մանցն Քրիստոսի :

Ընդ հովանեաւ պաշտ-
պանութեան քո ապաւի-
նիմք սուրբ Աստուածա-
ծին , մի՛ անտես առներ
զաղաչանս մեր ի կարիս
մեր . այլ յամենայն վը-
տանգէ ապրեցո զմեզ մըշ-
տակոյս փառաւորեալ և
օրհեալ :

Ո՞վ Տիրուհի մեր , ովք
միջնորդ մեր , ովք բարե-
խօս մեր , ընդ Որդւոյ
քում հաշտ արա զմեզ ,
Որդւոյ քում յանձն արա
զմեզ . եւ տարեալ կացո
զմեզ , յանդիման Որդւոյ
քո :



Ե ԽՈՐՀՈՒՄԻ ԶԱՐՉԱԾԱՆԱՑՆ
ՔՐԻՍՏՈՍԻ

Յաւոչք Զորեբշաբարի և Ուր-
բարու:

Քրիստոս լեալ հնաւ-
զանդ վասն մեր մահու
չափ և մահու խաչի:

Մի չայր մեր և տասն
Ողջոյն ասասցուք զմտաւ
ածելով զառաջին խոր-
հուրդ չարչար անացն
Քրիստոսի, զի յորժամ
մերձեցաւ ժամանակ չար-

չարանաց նորա՝ առեալ
ընդ իւր զՊետրոս, զՅա-
կոբոս և զՅովհաննէս՝ եւ
ի լեառն Զիթենեաց . եւ
մեկուսի ի նոցանէ աղօ-
թէր առ Հայրն ասելով.
Հայր, եթէ հնար իցէ՝ ան-
ցո զբաժակս զայս յինէն:
Հայր մեր:

Ընդ տասանց Ողջու-
նիցս՝ բիւրս մատուցեն
քեզ օրհնութիւնս, փա-
ռաւորհալ սուբ կոյս Աս-
տուածածին Մարիամ, ա-
մենայն հրեշտակք և հը-
րեշտակապետք եւ ամե-
նայն հոգիք երկնաւորք.
ընդ որս յուսամք տեսա-

նել եւ վերօրհնել զքեզ
յերկինս. ամէն:

Մի Հայր մեր և տասն
Ողջոյն ասասցուք զմուաւ
ածելով զերկրորդ խոր-
հուրդ չարչարանացն
Քրիստոսի. զի յորժամ
Քրիստոս ի պարտիզին
աղօթէր, Յուդաս մի յեր-
կոտասանիցն չոքաւ մատ-
նեաց զնա Հրէից: Խսկ
նոցա առեալ զգունդս ի
քահանայապետից՝ սու-
սերօք և բրօք եկին կա-
լան և կապեցին զՅիսուս,
և տարան յատեան առաջի
Պիղատոսի խաչել զնա
վասն մեղաց մերոց:

Հայր մեր: 9

Ընդ քսան Ողջունիցս՝
Քիւրս մատուսցեն քեզ
օրհնութիւնս, փառաւու-
րեալ սուրբ կոյս Աստուա-
ծածին Մարիամ՝ ամե-
նայն սուրբ նահապետք
և մարգարէք, անմեղ ման-
կունք, Մկրտիչն Յով-
հաննէս, եւ ամենայն
սուրբք հնոյ ուխտին. լնդ
որս յուսամք տեսանել եւ
վերօրհնել զքեզ յերկինս.
ամէն:

Մի Հայր մեր և տասն
Ողջոյն ասասցուք զմտաւ
ածելով զերբորդ խոր-
հուրդ չարչարանացն
Քրիստոսի. զի յորժամ

Քրիստոս Եկաց յատեանն
Պիղատոսի յետ բազում
հարցա փորձութեանց՝
պսակ ի փշոց կազմեալ
զինուորացն՝ եղին ի
գլուխ նորա, եւ ի բոլո-
րելն զայն՝ արիւն ընդ եւ-
րեսսն հոսէր վասն մեղաց
մերոց:

Հայր մեր:

Ընդ երեսուն Ողջու-
նիցս՝ Քիւրս մատուսցեն
քեզ օրհնութիւնս, փա-
ռաւորեալ սուրբ կոյս Աս-
տուածածին Մարիամ, ա-
մենայն սուրբ առաքեալք
եւ աշակերտք Տեառն եւ
աւետերանիչք, եւ ամե-
նայն լուսապսակ վկա-

յիցն դասք . ընդ որս յուշ
սամք տեսանել և վերօրհ-
նել զքեզ յերկինս . ա-
մէն :

Մի Հայր մեր և տասն
Ողջոյն ասասցուք զմտաւ
ածելով զչորրորդ խոր-
հուրդ չարչարանացն
Քրիստոսի , զի յետ բա-
զում գանից եւ ձաղանաց
բարձեալ զծ անր աբեռն
խաչափայտն յուս նորա՝
ածին զնա ի Գողգոթա ի
խաչ հանել զնա վասն
մեղաց մերոց :

Հայր մեր :

Ընդ քառասուն Ողջու-
նիցս՝ բիւրս մատուսցեն



քեզ օրհնութիւնս , փա-
ռաւորեալ սուրբ կոյս Աս-
տուածածին Մարիամ , ա-
մենայն սուրբ խոստովա-
նողք , հայրապետք , վար-
դապետք , միանձունք , ա-
նապատականք , կուսանք ,
այրիք և արամբիք . ընդ
որս յուսամք տեսանել և
վերօրհնել զքեզ յերկինս .
ամէն :

Մի Հայր մեր և տասն
Ողջոյն ասասցուք , զմտաւ
ածելով զհինգերորդ խոր-
հուրդ չարչարանացն
Քրիստոսի , զի յորժամ
զՓրկիչն մեր ի վերայ խա-
չին տարածեալ զձեռսն և

զոտսն բնեռեցին, և բար-
ձրացուցեալ կանգնեցին
զնա, յայնժամ խաւար
եղե ի վերայ ամենայն
երկրի, արեգակն եւ լու-
սին խաւարեցան, վէմք
պատառեցան, գերեզ-
մանք բացան, եւ բազում
մարմինք ննջեցելոց սըր-
բոց յարեան. եւ յիննե-
րորդ ժամուն աղաղա-
կեաց Յիսուս ի խաչին.
Աստուած իմ, Աստուած
իմ, ընդէր թուղեր զիս. և
խոնարհեցուցեալ զգլուխն՝
աւանդեաց զհոգին առ
չայր, և իջուցեալ զմար-
մին նորա ի խաչէն եղին
ի գերեզմանի:

Հայր մեր:

Ընդ յիսուն Ողջունիցս՝
բիւրս մատուցեն քեզ
օրհնութիւնս, փառաւո-
րեալ սուրբ կոյս աստուա-
ծածին Մարիամ, սրբու-
հին Աննա մայր քո, և
Մարիամանք ազգականք
քո, Մագդաղենացին և
Մարթա սիրողք եւ սիրե-
լիք քո, եւ ամենայն կու-
սանք այրիք եւ արամ-
բիք, ընդ որս յուսամք
տեսանել եւ վերօրհնել
զքեզ յերկինս. ամէն:
Փառք Հօր: Այժմ:
Ողջ լեր թագուհի. Տես
կրես 123:



E. BAROUX

Ե ԽՈՐՀՈՒԹԻՒՆ ՓԱՌԱԽՈՒԹՈՒ-
ԹԵԱՆՆ ՎԲԻՍՏԱՆԻ

Յաշուր Կիւրակէի և Հինգլա-
րաբու.

Աստուած յօգնել ինձ նա-
յեաց ~
Եւ Տէր յընկերել ինձ
փութիւ:

**

Մի Հայր մեր եւ տասն
Ողջոյն ասասցուք, զմը-
տաւ ածելով զառաջին
խորհուրդ փառաւորու-

թեանն Փրիս տոսի , զի
յերլորդ աւուր թաղման
իւրոյ ընդ լուսանալ միա-
շաբաթին՝ իւրով աս-
տուածային ամենակալ
զօրութեամբն յարուցեալ
ի մեռելոց երեւեցաւ Մա-
րիամու , եւ ապա առա-
քելոցն ամենեցուն . եւ
գրօքն փակելովք մտեալ
առ աշակերտսն , ասէ .
Խաղաղութիւն ընդ ձեզ :

Հայր մեր :

Ծնդ տասանց Ողջու-
նիցս՝ բիւրս մատուցեն
քեզ օրհնութիւնս , փա-
ռաւորեալ սուրբ կոյս
Աստուածածին Մարիամ ,
ամենայն հրեշտակա-

պետք եւ ամենայն հոգիք
երկնաւորք , ընդ որս
յուսամք տեսանել և վեր-
օրհնել զքեզ յերկինս .
ամէն :

Մի Հայր մեր և տասն
Ողջոյն ասասցուք , զմբ-
տաւ ածելով զերկլորդ
խորհուրդ փառաւորու-
թեանն Փրիստոսի , զի
յետ յարութեան իւրոյ
զաւուրս քառասուն շըր-
ջեցաւ ի վերայ աշխարհի ,
և ապա իւրով աստուա-
ծային ամենակալ զօրու-
թեամբ համբարձաւ յեր-
կինս , և նստաւ ընդ աջմէ
Հօր :

Հայր մեր :

Ընդ քսան Ողջունիցո՞ւ
բիւրս մատուցեն քեզ
օրհնութիւնս , փառաւո-
րեալ սուրբ կոյս Աստուա-
ծածին Մարիամ , ամե-
նայն սուրբ Հնահապետք
և մարգարէք, անմեղ ման-
կունք , Մկրտիչն Յով-
հաննէս եւ ամենայն
սուրբք հնոյ ուխտին , ընդ
որս յուսամք տեսանել եւ
վերօրհնել զքեզ յերկինս .
ամէն :

Մի Հայր մեր և տասն
Ողջոյն ասասցուք , զմլ-
տաւ ածելով զերրորդ
խորհուրդ փառաւոր ու-
թեանն Քրիստոսի , զի իբ-

րե համբարձաւ յերկինս՝
առաքեաց զխոստացեալ
չողին սուրբ ի վրայ ա-
ռաքելոցն . և նոցա լցեալ
չոգւովս սրբով , երթեալ
քարոզեցին ընդ ամենայն
աշխարհ վասն արքայու-
թեանն Աստուծոյ .

Հայր մեր :

Ընդ երեսուն Ողջու-
նիցո՞ւ բիւրս մատուցեն
քեզ օրհնութիւնս , փա-
ռաւորեալ սուրբ կոյս Աս-
տուածածին Մարիամ , ա-
մենայն սուրբ առաքեալք
և աշակերտք Տեառն եւ
աւետարանիչք , եւ ամե-
նայն լուսապսակ վկայիցն
դասք , ընդ որս յուսամք

տեսանել եւ վերօրհնել
գքեզ յերկինս , ամէն :

Մի Հայր մեր և տասն
Ողջոյն ասասցուք , զմը-
տաւ ածելով զչորրորդ
խորհուրդ փառաւորու-
թեանն Քրիստոսի , զի իբ-
րև եհաս ժամանակ վախ-
ճանելոյ Տիրամօրն՝ առա-
քեաց զԳաբրիէլ հրէշտա-
կապեան բերել նմա ըզ-
յաղթանակ , հրաւիրելով
զնա ի վերին առագաստն ,
յոր վերափոխեցաւ նա
յերկինս :

Հայր մեր :

Ընդ քառասուն Ողջու-
նիցս՝ բիւրս մատուցեն

քեզ օրհնութիւնս , փա-
ռաւորեալ սուրբ կոյս
Աստուածածին Մարիամ ,
ամենայն սուրբ խոստո-
վանողք , հայրապետք ,
վարդապետք , միան-
ձունք , անապատականք ,
կուսանք այրիք եւ ա-
րամբիք . ընդ որս յուսամբ
տեսանել և վերօրհնել ըզ-
քեզ յերկինս . ամէն :

Մի Հայր մեր և տասն
Ողջոյն ասասցուք , զմը-
տաւ ածելով զհինգերորդ
խորհուրդ փառաւորու-
թեանն Քրիստոսի , զի
յորժամ սուրբ կոյսն փո-
խեցաւ յերկինս , Հայրն

ամենակալ և Որդին միաւծին և սուրբ Հոգին Աստուած՝ պսակեալ զնա անմահական թագիւն՝ բազմեցուցին յաթռոռն լուսեղէն. Նևեր նա գըշխոյ երկնի և երկրի, բարեխօս առ Տէր վասն մեր և վասն ամենայն ուղղափառ հաւատացելոց:

Հայր մեր :

Ընդ յիսուն Ողջունիցո՝
բիւրս մատուցեն քեզ
օրհնութիւնս, փառաւուրեալ սուրբ կոյս Աստուածածին Մարիամ, սըրբուհին Աննա մայր քո, եւ Մարիամանք ազգականք քո. Մագդաղենաւ

ցին և Մարթա, սիրողք և սիրելիք քո, և ամենայն կուսանք, այրիք եւ արամբիք. ընդ որս յուսամք տեսանել և վերօրհնել զքեզ յերկինս. ամէն: Փառք Հօր. Այժմ: Ողջ լեր թագուհի. Տեսերեւ 123:



ՄԱՂԹԱՆՔ

LՈՐԵՏԵԱՆ

ՈՐ Ի ՍՈՒՐԲ ՏԱՅ ԿՈՒՍԻՆ
Ի ՆԱԶԱՐԵԹ



Տէր ողորմեաց .
Քրիստոս ողորմեաց :
Տէր ողորմեաց .
Քրիստոս ողորմեաց :
Քրիստոս լուր մեզ .
Քրիստոս ունկն գիր մեզ :
Հայր՝ Երկնաւոր Աստուած .
Ողորմեաց մեզ :

Որդի փրկիչ աշխարհի Աս-
տուած . ողորմեաց մեզ :
Հոգիդ սուրբ Աստուած .
ողորմեաց մեզ :
Սուրբ Երրորդութիւն մի
Աստուած . ողորմեաց
մեզ :
Սրբուհի Մարիամ .
Աղաչեա վասն մեր :
Սուրբ Աստուածածին .
Աղաչեա վասն մեր :
Սուրբ Կոյս կուսանաց .
Աղաչեա վասն մեր :
Մայր Քրիստոսի . աղ :
Մայր աստուածային
շնորհաց . աղ :
Մայր մաքրութեան . աղ :
Մայր զգաստութեան . աղ :
Մայր անարատ . աղ :

Մայր ամբիծ . աղ :
Մայր սիրելի . աղ :
Մայր սքանչելի . աղ :
Մայր Արարչին . աղ :
Մայր Փրկչին . աղ :
Կոյս իմաստուն . աղ :
Կոյս գերյարգոյ . աղ :
Կոյս գերահոչակ . աղ :
Կոյս կարող . աղ :
Կոյս բարեգութ . աղ :
Կոյս հաւատարիմ . աղ :
Հայելի արդարու-
թեան . աղ :
Աթոռ իմաստութեան . աղ :
Պատճառ մերոյ խըն-
դութեան . աղ :
Անօթ հոգևորական . աղ :
Անօթ պատուական . աղ :
Անօթ շքեղ եռան-
դեան . աղ :

Վարդ խորհրդական . աղ :
Աշտարակ դաւթեան . աղ :
Աշտարակ փղոսկրեայ . »
Տաճար ոսկեղէն . աղ :
Տապանակ ուխտի . աղ :
Դուռն երկնից . աղ :
Աստղ առաւօտեան . աղ :
Բժշկութիւն հիւան .
դաց . աղ :
Ապաստան մեղաւու .
բաց . աղ :
Մխիթար վշտացելոց . աղ :
Օգնական քրիստու .
նէից . աղ :
Թագուհի հրեշտակաց . »
Թագուհի նահապե .
տաց . աղ :
Թագուհի մարգարէից . »
Թագուհի առաքելոց . աղ :

Թագուհի մարտիրու .
սաց . աղ :
Թագուհի խոսսովա .
նողաց . աղ :
Թագուհի կուսանաց . աղ :
Թագուհի ամենայն
սրբոց . աղ :
Գառն Աստուծոյ , որ
բառնաս զմեղս աշ .
խարհի .
Խնայեա ի մեզ Տէր :
Գառն Աստուծոյ , որ
բառնաս զմեղս աշ .
խարհի .
Լուր մեզ Տէր :
Գառն Աստուծոյ , որ բառ .
նաս զմեղս աշխարհի .
Ողորմեաց մեզ :
Քրիստոս լուր մեզ :
Քրիստոս ունկն դիր մեզ :

Ա. Ղ. Թ. Ք.

Անձառելիդ Աստուած
ողորմութեան , որ յանձն
առեր ոչ միայն մարդա-
նալ , այլ և որդի մարդոյ
լինել , և ծննդեամբ ի սուրբ
կուսէ՝ մայր քեզ ունել
կամեցաբ՝ որ զԱստուած
ունէիր հայր ի յերկինս :
Տուր մեզ աղերսեմք՝ ըզ-
Տիրամօրդ յիշատակ սըր-
տի մտօք քարոզել , զաս-
տուածամայրութիւն նո-
րա գերազանց մեծարա-

նօք պատուասիրել . նո-
րին գերահրաշ մեծու-
թեան խոնարհութեամբ
զմեզ ներքոյ արկանել .
որ զքեզ Հոգւով սրբով
յուցաւ , զքեզ կուսու-
թեամբ ծնաւ , եւ զքեզ
յերկրի հպատակօրէն հը-
նազանդ զաւակ ունել
արժանի եղե՛ զՏէր մեր
Յիսուս Քրիստոս . որ կեն-
դանի թազաւորդ ես ընդ
Հօր եւ ընդ սուրբ Հոգւոյն
յաւիտեանս . ամէն :

Առաջօտը , կեսօրը , իրիկունը :

Հրեշտակ Տեառն աւե-
տեաց կուսին Մարիամու ,

և յղացաւ ի Հոգւոյն սըր-
բոյ. Ողջոյն քեզ:

Ահաւասիկ կամ աղաւ-
խին Տեառն, եղիցի ինձ
ըստ բանի քում: Ողջոյն:


Եւ Բանն մարմին եղեւ,
և բնակեաց ի մեզ: Ող-
ջոյն:

Զշնորհս քո, աղաչեմք
զքեզ Տէր, հեղ ի հոգիս
մէր, զի որ աւետեօք հը-
րեշտակին խորհրդա-
զգածք եղաք մարդեղու-
թեան Փրիստոսի որդւոյ
քո, չարչարանօք նորին և
խաչիւառաջնորդեալ հաս-
ցուք ի փառս յարութեան.
ամէն:

Տղայոց աղաչանիք առ սուրբ
Կոյսի:

Տիրամայր Աստուածա-
ծին, որ ծնար իմ Յիսուս
Փրկիչս, կ'աղաչեմ յիշէ
քու քաղցր մայրութիւնդ,
ու քաղցրիկ Յիսուսի ման-
կութիւնը, որ ինծի հա-
մար և ինծի պէս տղայ ե-
ղաւ, ու քու մայրական
սննդեամբդ քու սուրբ
ձեռքդ մեծցաւ, որ զիս
շնորհքով մեծցընէ: Դուն
ինզրէ Յիսուսէս, որ իր
շնորհքը իմ վրայէս պա-
կաս չընէ. ինծի խելք ու
միաք տայ, սուրբ և պար-

կեշտ և անարատ պահէ,
որ սուրբ Յովհաննէս աւ
ւետարանչին պէս իրեն
սիրելի աշակերտ ըլլամ.
քեզ ալ արժանաւոր որ
դեզիր: Ես զքեզ կը ճանչ-
նամ ինծի սիրական մայր
զթած, դուն ալ զիս ճանչ-
ցիր ինչպէս սիրուն զա-
ւակ մը՝ ինչպէս եղբայր
Յիսուսի. որ է միանգա-
մայն իմ Տէրս և թագա-
ւորս, և զու Տիրուհի իմ
և թագուհի կոյս, փառա-
ւորեալ փառօք ի փառս
Միածնիդ յաւիտեանս. ա-
մէն:



ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ Ա.Դ. ՍՈՒՐԵ
ԾՆՈՒՆԴՆ ՔՐԻՍՏՈՍԻ



Որ սկսանի ի 29 Կոյեմբ.

Օրհնեալ է ժամն այն,
ով կոյս Մարիամ, յորում
եղեր մայր Աստուծոյ:
Ողջոյն քեզ Մարիամ.
Տասնիցս կրկնեա:

*

Օրհնեալ է ժամն այն,
ով կոյս Մարիամ, յորում
ծնար զՈրդին Աստուծոյ:
Ողջոյն քեզ:

✿

Օհնեալ է առաջին
շիթն կաթին, ովք կոյս
Մարիամ, զոր դիեցաւ ի
տաեանց քոց Որդին Աս-
տուծոյ:

Ողջոյն քեզ:

✿

Օրհնեալ է առաջին
համբոյրն այն, ովք կոյս
Մարիամ, զոր ետուր աս-
տուծային շրթանց Որ-
դոյն Աստուծոյ:

Ողջոյն քեզ:



Յերեկոյի ճրագալուցին, ա-
սա նախ զառացին մասն վար-
դարւանին ի խորհուրդ ոչըս-
խորեան

Եւ աւզա զադօրս զայս:

Ովք հզօր դշխոյ հրեշ-
տակաց, Արբուհի և Մայր
Քրիստոսի, գլժած և ողոր-
մած Տիրուհի. անարժան
ծառայս (այս անուն) խո-
նարհեալ յամենասուրբ
ուս քոյ՝ աղաչեմ զքեզ,
ընկալ յինէն ի տառա-
պեալ եւ ի մեղուցեալ ծա-
ռայէս քումմէ զհնգեսին
զուրախական խորհուրդս

սուրբ Վարդարանի քո,
զհազար ողջոյնսն՝ հան-
գերձ օրհնութեամքն ,
զոր մատուցի անարժա-
նաղէս քում մէծ ու-
թեանդ : Եւ այժմ աղա-
չեմ զքեզ, Տիրամայր և
կոյս, ընկալ վասն իմ ի
նորածին Որդւոյ քումմէ
շնորհս փոխանակ հազա-
րացն, զի ի կենդանու-
թեան զզջացեալ ի բոլոր
սրտէ, և ի մահու՝ հասից
անվտանգ ի կեանսն յա-
ւիտենից, ամէն :

ՄԱՍՆԱԿՈՐ Ա.Դ.ՕԹՅԻ

Փրկուրեան հասնելու:

Աստուած իմ , հաւա-
տամ ի քեզ , հաւատ-
քըս զօրացուր: Յուսամ
ի քեզ, յոյսս ապահով-
ցուր: Աիրեմ զքեզ , սէրս
աւելցուր:

Կը զզջամ մեղքերուս
վրայ, զզջումս շատցուր:
Զքեզ կը պաշտեմ, որ
իմ առաջին սկիզբս ես.
Քեզ կը փափազիմ , որ
իմ վերջին վախճանս ես.
շնորհահալ եմ քեզի , որ

միշտ իմ բարերարս ես.
զքեզ կը կանչեմ, որ իմ
մէկ հատիկ պաշտպանս
ես :

Տէր իմ և Աստուած
իմ, քու իմաստութեամբդ
զիս կառավարէ. քու ար-
դարութեամբդ զիս վախ-
ցուր . ողորմութեամբդ
զիս մխիթարէ. կարողու-
թեամբդ զիս պահպանէ :

Քեզ կը նուիրեմ իմ
միտքս, խօսքս, գործս ու
քաշածս. որ ասկից ետեւ
զքեզ միայն մտմտամ ,
քու վրադ միայն խօսիմ,
քու կամացդ ալէս միայն
գործեմ, ու քեզի համար
միայն քաշեմ:

Այն բանը կ'ուզեմ, Տէր,
ինչ որ գուն կ'ուզես. քու
կամքդ կ'ուզեմ՝ ինչպէս
որ կ'ուզես, և որչափ որ
կ'ուզես :

Կ'աղաչեմ Տէր, միտքս
լուսաւորէ, կամքս վառէ,
մարմինս մաքուր պահէ,
հոգիս սրբէ :

Դուն ինծի օգնէ, Աս-
տուած իմ, որ կարենամ
անցած մեղքերս քաւել,
փորձութիւններուն յաղ-
թել, վատթար բնութիւնս
ոտքի տակ առնել, և ինծի
ընկած առաքինութիւն-
ները կատարել :

Սիրտս լեցուր սիրով՝
քու ինծի ըրած բարիք-

ներուգ համար, ատելու
թեամբ՝ մեղքերուս դէմ.
աղէկ սրտով ու ջանքով՝
իմ եղբօրս համար,
ու բանի տեղ չըսեպե-
լով աշխարհիս ամէն բա-
ները:

Միաքս կրթէ ու յոր-
դորէ, որ միշտ իմ մե-
ծերուս հնազանդիմ, իմ
հպատակներուս հետ սի-
րով վարուիմ, բարեկա-
մներուս հաւատարիմ ըլ-
լամ, թշնամիներուս սըր-
տանց ներեմ:

Օգնէ ինծի, Տէր, որ մար-
մինս ճնշելով՝ հեշտաշ-
սիրութիւնը կոխեմ, ո-
գորմութիւն ընելով՝ աշ-

գահութիւնը կոխկըռտեմ.
հեզ ըլլալով՝ բարկու-
թեանը յաղթեմ, եւ ջեր-
մեռանդ ըլլալով՝ գաղջու-
թիւնը հեռացնեմ:

Տուր ինծի, Աստուած
իմ, որ հաւատարիմ ըլլամ
իմ գործերուս մէջ, սըր-
տու փորձանքներու մէջ.
ձախորդութեան ատենը
համբերով, յաջողութեան
ատենը խոնարհ:

Մի թողուր որ մոռնամ՝
խելքս գլուխս աղօթք ը-
նել, ուտելու խմելու չա-
փը պահել, զգուշաւոր
ըլլալ ամէն բանի մէջ,
ու հաստատուն մնալ բա-
րի մտքի վրայ:

Զիս շարժէ որ ճշմարիտ փոյթ ունենամ խղճմուանքս միշտ մաքուր պահելու , ամէն շարժմունքիս մէջ պարկեշտ ըլլալու , ամենուն բարի օրինակ տալու , ու առաքինի վարքով կենալու :

Քեզմով ջանք ունենամ ամէն ատեն բնութեանս յաղթելու , շնորհքիդ գործակից ըլլալու , օրէնքներդ պահելու , ու յաւիտենական փրկութեան արժանի ըլլալու :

Շնորհէ ինծի , Տէր , որ ճանչնամ երկրիս ոչընչութիւնը , երկնքին մե-

ծութիւնը , կենաց կարծութիւնը , յաւիտենականութեան անվախճան տեւողութիւնը :

Տէր Աստուած իմ , տուր ինծի՝ զիս մահուան պատրաստել , քու դատաստանէդ վախնալ , դըժովիքէն հեռանալ . և արքայութիւնդ ժառանգել՝ շնորհօք և ողորմութեամբ քու անբաւ մարդասիրութեանդ . ամէն :

Օրհնուրիւն կուսին Արիաւրն

Մեծացուսցէ անձն իմ զտէր , և ցնծասցէ հոգի

իմ Աստուծով փրկչաւ
իմով։

Այց արար ի վերայ խո-
նարհութեան ազախնոյ
իւրոյ. այսուհետեւ երա-
նեսցեն ինձ ամենայն
ազգք։

Արար ընդ իս մեծա-
մեծս հզօրն. եւ սուրբ է
անուն նորա։

Ողորմութիւն արար
ազգաց յազգս երկիւղա-
ծաց իւրոց, և արար
զօրութիւն բազկաւ իւ-
րով։

Յրուեաց զամբարտա-
ւանս ի մտաց սրտից, և
քակեաց զհզօրս յաթու-
ոոց։

Զիսոնարհս բարձրա-
ցոյց, զկարօտս ելից բա-
րութեաժք, եւ զմեծա-
տունս արձակ եաց ու-
նայնս։

Պաշտպանեաց Խորա-
յելի ծառայի իւրոյ, յիշե-
լով զողորմութիւն իւր։

Որպէս խօսեցաւ առ
հարս մեր ընդ Աքրահա-
մու եւ զաւակի նորա յա-
ւիտեան։

Աղօրք Մանասէի քագաշորին։

Տէր ամենակալ, Աս-
տուած Աքրահամու՝ Խօս-
հակայ, Յակոբայ՝ եւ զա-
ւակի նոցա արդարոց։

ամենակալ Տէր, թող ըզ-
մեղս իմ:

Որ արարեր զերկինս և
զերկիր և զամենայն զարդ
նոցա, ամենակ:

Որ կապեցեր զծով բա-
նիւ հրամանի քոյ. փա-
կեցեր զխորս, կնքեցեր
ահաւոր եւ փառաւորեալ
անուամբ քով սրբով. ա-
մենակ:

Որ ամենայն ինչ սար-
սէ և գողայ յերեսաց ա-
հի զօրութեան քոյ. ամե-
նակ:

Ամբաւ է մեծվայելչու-
թիւն փառաց սրբութեան
քո, և սաստիկ է բար-
կութիւն սպառնալեաց

քոց ի վերայ մեղաւորաց.
անչափ և անքնին են ո-
ղորմութիւնք աւետեաց
քոց. ամենակ:

Դու Տէր բարձրեալ՝
զթած, երկայնամիտ, բա-
զումողորմ, եւ զղջանաս
ի վերայ չարեաց մարդ-
կան. ամենակ:

Դու, Աստուած, ոչ ե-
ղեր ապաշխարութիւն
վասն արդարոցն Աքրա-
համու՝ իսահակայ եւ Յա-
կոբայ, որք ոչ մեղան քեզ.
ամենակ:

Այլ եղեր ապաշխա-
րութիւն վասն իմ մեղա-
ւորիս, զի մեղայ աւելի
քան զաւազ ծովու, եւ

բազմացան անօրէնուշ
թիւնք իմ. ամենակ:

Զեմ արժանի հայել եւ
տեսանել զբարձրութիւնս
երկնից ի բազմութենէ ա-
նօրէնութեան իմոյ. ամե-
նակ:

Կորացեալ եմ ի բըռ-
նութենէ կապանաց եր-
կաթից, և ոչ գոյ ինձ հան-
գիստ. ամենակ:

Բարկացուցի զսըրտ-
մտութիւն, և զչար առա-
ջի քո արարի. կանգնե-
ցի պատկեր՝ և բազմա-
ցուցի զցասումն. ամենակ:

Եւ արդ, Տէր, խոնար-
հեցուցանեմ զծունկս սըր-
տի իմոյ, եւ հայցեմ ի
քաղցրութենէ քումմէ. ամ:

Մեղայ, Տէր, մեղայ, և
զանօրէնութիւնս իմ ես
ինձէն զիտեմ. ամենակ:

Աղաչեմ եւ խնդրեմ ի
քէն, թող ինձ, Տէր, թող
ինձ. և մի կորուսաներ
զիս ըստ անօրէնութեան
իմոյ. ամենակ:

Մի' յափտեան բարկա-
նար ինձ, Տէր, և մի' յի-
շեր զչարիսն իմ, եւ մի'
պարտաւորեր զիս ընդ ի-
ջեալս ի ներքոյ երկրի
չարեօք. ամենակ:

Զի դու Աստուած՝ Աս-
տուած ապաշխարողաց
ես, և յիս ցոյց զբարերա-
րութիւնդ քո, զի անար-
ժան եմ. ամենակ:

Կեցուսցես զիս ըստ
բազում ողորմութեան
քում. և ես օրհնեցից ըզ-
քեզ զամենայն աւուրս
կենաց իմոց. ամենակ:

Զքեզ, Տէր, օրհնեն ա-
մենայն զուարթունք երկ-
նից. և քո են փառք յա-
ւիտեանս. ամէն:

Փառք Հօր և Որդւոյ:

Աղաչեմ եւ խնդրեմ ի
քէն, Տէր՝ թող ինձ զմեղս
իմ:

Բազումողորմ Տէր, ո-
ղորմեա ինձ:

Աստուած, քաւեա զիս
զմեղաւորս:

Արարիչ իմ և յոյս Աս-
տուած, զթա յիս ի մե-

դուցեալ ծառայս, և ողոր-
մեա ինձ բազմամեղիս:
Ամենօրհնեալ սրբուհի՝
և միշտ կոյս Աստուածա-
ծին Մարիամ, բարեխօ-
սեա առ Տէր վասն իմ
մեղաւորիս:

Ամենայն սուրբք Աս-
տուածոյ, բարեխօսեցէք
առ Հայր յերկինս վասն
մեր մեղաւորացս:


Քրիստոս որդի Աստու-
ծոյ անոխակալ՝ ընկալ
զաղաչանս միր. զի ի քեզ
են ապաւինեալ անձինք
մեր:

Յաղթօղ գօրութեամբ
սուրբ եւ կհնդանարար և

պատուական խաչիւ քով,
Տէր, պահպանեա զմեզ:

Առաքեա, Տէր, զհրեշ-
տակ խաղաղութեան քոյ,
որ եկեալ պահեսցէ զմեզ
անխոռվս ի տուէ և ի
գիշերի:

Եւ մարդասիրութեամբ
քո յիշեա զմեզ, Տէր, յի-
շեա զմեզ՝ յորժամ զաս
արքայութեամբ քով, եւ
ողորմեա մեզ:



ՄՏԱԾԱԿԱՆԻՆ

Կարեւորութիւնը:



Ազօթքին աղէկն ու ա-
մենեւին հարկաւորը՝ մը-
տածականն է. ուստի
ամէն օր նայէ որ մէկ
քառորդի չափ ամէն
հոգդ թողուս, ու առան-
ձինն մտածես՝ ինչ որ Բա-
րի խորհուրդներ ըսուած
գրքուկին մէջ, կամ Խոկ-
մունքին մէջը գրուած է.
որով կարենաս քու

պարագրդ ճանչնալ, խըղճ՝
մտանքդ քննել ու մաք-
րել, Աստուծոյ վախովը
ու սիրովը ճշմարիտ աս-
տուածապաշտ ըլլալ, ան-
տարակոյս փրկութեան
հասնիլ Աստուծով։ Այս
վախճանիս համար գրուած
են ամէն աղօթքներ, եւ
մանաւանդ մտածական ա-
ղօթքը։



ՑԱՆԿ


Ծանուցումն	3
Առաւոտեան աղօթք	5
Ներգործութիւն հա-	
ւատոյ	9
— Յուսոյ	11
— Սիրոյ	12
Աղօթք առ սուրբ Աս-	
տուածածին	14
— Առ պահապան	
հրեշտակն	16
Պատարագի աղօթք .	19
Իրիկուան աղօթք .	44
Գրիգորի Նարեկաց-	
ւոյ՝ Ընկալ քաղցրու-	
թեամբ	48

Անկանիմք առաջի քո	52
Մայր սուրբ սքանչելի	53
Ազօթք առ սուրբն Յովսէփ	57
Առ սուրբն Յովհանն նէս Մկրտիչ	58
Առ սուրբն Գրիգոր Լուսաւորիչ.	61
Առ սուրբն Անտոն անապատական	64
Առ ամենայն սուրբս	66
Մաղթանք վասննըն ջեցելոց	68
— Ի խորոց կարդացի.	68
Առ սուրբ Երրորդու- թիւն, և առ սուրբս. Փառք քեզ տէր Աս- տուած մեր.	70
Ազօթք ընելու շնորհք	73

ինդրել . . .	77
Ապաւինութիւն առ	
Աստուած . . .	80
Խոստովանանքի պա- տրաստութիւն . .	83
— Ազօթք զղջման, նախ քան խոստո- վանութիւն . .	86
— Խոստովանիմ ա- ռաջի Աստուծոյ .	88
Հաղորդութեան պա- տրաստութիւն .	89
Գոհութիւն հաղոր- դուելէն ետև .	93
Սրտանց հառաչանք- ներ	99
Երգ առ Մայր ցաւա- գին՝ Կայր առ իսա- չին	107

- Աղօթք վարդարանի՝
ի խորհուրդ ուրաշ
խութեան 115
— Ողջ լեր թագուհի. 123
ի խորհուրդ չարշ
չարանաց Քրիստու
սի 127
ի խորհուրդ փառաշ
ւորութեանն Քրիս
տոսի 137
Մաղթանք Լորետեան 147
Անճառելիդ Աստուած 152
Հրեշտակ Տեառն . . 153
Աղաչանք տղայոց առ
սուրբ Կոյսն 155
Պատրաստութիւն՝ առ
սուրբ ծնունդն Քը.
րիստոսի 159
Ո՛վ հզօր դշմոյ 161

- Մասնաւոր աղօթք
փրկութեան հաս
նելու 163
Օրհնութիւն Մարիա
մու՛ Մեծացուսցէ. 169
Աղօթք Մանասէի
թագաւուին՝ Տէր
ամենակալ 171
ւոտածականի կարեւ
Մրութիւնը 179





ՀՅ Ազգային գրադարան



NL0814112

1

1569